ՀՀ-ից արգելվել է արտահանել թարմ թութ՝ 13 341 կգ, պղպեղ՝ 34 563 կգ, թարմ պղպեղ՝ 14 032 կգ, գունավոր բուլղարական պղպեղ՝ 13 250 կգ, թարմ կտրած հերբերա՝ 132 կգ, մեխակ՝ 40 000 կգ, ալստրոմերիա՝ 303 կգ, թարմ կտրած լիզիանթուս՝ 356 կգ: Բոլոր դեպքերում պատճառը կարանտին համարվող առանձնյակների ցուցանիշն է:

Կարդացեք՝ էջ 4

Ախկինները 5.000-10.000 դրամ էին բաժանում, իսկ ուսապարկերը ամեն հնարավոր նյութական ու ոչ նյութական ընտրակաշառքը բաժանեցին՝ ցուցադրաբար, համատարած, ու այդքանից հետո ձայներ չստացան, ստիպված եղան ընտրակեղծիքի, ԿԸՀ-ի կողմից Ընտրական օրենսգիրքը ոտնահարելու ճանապարհով ԲՀԿ-ից ձայներ ու մանդատներ գողանալ:

Կարդացեք՝ էջ 5

Իրենք ասում են, որ գալ-գնալու կարիք չի լինելու, բայց մենք Երեւանում ենք ապրում: Ամեն փոքր հարցով փորձելու են նախարարությունում հարցի լուծումը գտնել, իսկ նախարարությունն ունի-վերսալ չի, չի կարող բոլոր հարցերին պատասխանել: Հարցերի կուտակում է լինելու, դժգոհություններ, վատ հետեւանքներ կրթության համար:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 114 (4249), 10 հուլիս, ուրբաթ, 2026

www.hraparak.am

Ութ տարի Հայաստանը ղեկավարող Նիկոլ Փաշինյանը, որ 2018 թվականի իշխանափոխությունից մեկ տարի անց դատական համակարգի դեմ ակցիա իրականացրեց՝ հրահանգելով շրջափակել դատարաններն ու կաթվածահար անել դրանց աշխատանքը, այսօր էլ է դժգոհ արդարադատության համակարգից: Մի քանի օր առաջ նա նորից պնդեց, որ քաղաքացիները գոհ չեն դատական համակարգից ու իրեն հարցնում են, թե ինչու է, օրինակ, երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանն ազատության մեջ: «Ում քսակը ավելի հաստ ա, ցանկացած գործով կգնա կարդարանա դատարանում, ցանկացած գործով: Խնդիր չունեն, ասենք՝ դիակի վրա կարող ա մարդկանց բռնես, գնան հետո բան անեն, արդարանան, դուրս գան, եւ այլն, եւ այլն: Բա էդ ա, որ ասում եմ՝ եռագլուխ մաֆիայի դեմ ենք պայքարում էս ութ տարի ա»,- ասաց նա՝ ակնարկելով, որ գնալու է կաշառակեր դատավորների հետեւից: Դատական համակարգում նրա այս հայտարարությունն անեկդոտի թեմա է դարձել: Դատավորների վերջին ժողովի ժամանակ մի խումբ դատավորներ քննարկել են այն եւ հումորներ արել, թե ինչպես կարող է մասիսմելքոնյաններին խրախուսող անձը խոսել արդարությունից: Մեզ ասացին, որ նրանք չեն վախենում Փաշինյանի՝ իրենց ետեւից գնալու սպառնալիքներից, քանի որ շատերը հոգնել են այս իրավիճակից եւ ուզում են ինքնակամ դուրս գալ համակարգից:

Մերձավանի նախկին ՔՊական ղեկավար Միեր Ախտոյանը եւ հայրը արտերկրում անհետացել են: Հիշեցնենք, որ Միեր Ախտոյանը Հայաստանը լքել էր Վալոդյա Գրիգորյանի սպանությունից 10 օր առաջ, այժմ մեղադրյալի աթոռին են նրա ազգական Նարեկ Օհանյանը եւ սպանության մեջ մեղադրվող Գեւորգ Հարությունյանը: Մեր տեղեկություններով՝ Միեր Ախտոյանի մայրը նույնպես ամուսնու եւ որդու հետ մեկնել էր արտերկիր, ըստ բարեկամների՝ նա ՀՀ է վերադառնում առանց ամուսնու եւ որդու: ՀՀ իրավապահները չգիտեն, թե ինչ է կատարվել դրսում: Քննչական կոմիտեից ասացին, որ Ախտոյանների «անհետանալու» հետ կապված վարույթ չկա:



Հուլիսի 9-ին, ժամը 17.30-ի սահմաններում Նոյեմբերյան համայնքի Ոսկեպար գյուղում մի երիտասարդ ցանկացել է Ոսկեպար գետում լողալ: Նա բարձունքից գետն է ցատկել եւ ժայռին բախվել՝ գլխի վնասվածք ստանալով: 21-ամյա երիտասարդի վնասվածքը մահացու է եղել: Նա Նոյեմբերյան համայնքի Կողբ գյուղի բնակիչ է: Երիտասարդը մեկ տարի առաջ էր վերադարձել պարտադիր զինծառայությունից:

Հայի թշնամիները

Երեկ տեղեկացանք, որ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը «բաց հրավեր» է հայտարարել. հայեցակարգեր է ընդունում՝ «ուղղված Հանրապետության հրապարակում տեղակայված թանգարանային շենքում գործող Հայաստանի պատմության թանգարանի, Հայաստանի ազգային պատկերասրահի, Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի տարածքների ընդլայնման եւ զարգացման ճարտարապետական նախագծի գաղափարների ու հայեցակարգային առաջարկների հավաքագրմանը՝ դիտարկելով նաեւ Հանրապետության հրապարակի ստորգետնյա հնարավոր տարածքների ներառումը»: Այս երկարաշունչ նախադասությանն ուշադրություն չէինք դարձնի, եթե չլիներ հայտարարության վերնագիրը՝ «Հանրապետության հրապարակի ստորգետնյա տարածքների ներառմամբ թանգարանային համալիրի ընդլայնման ճարտարապետական նախագծի հայեցակարգային առաջարկների հավաքագրում»: Դուք հավանաբար մոռացել եք, իսկ ես հիշում եմ, որ Հրապարակի կառուցապատման ժամանակ ինչ-որ պարսկական բաղնիքի հետքեր էին հայտնաբերվել շատ տարիներ առաջ: Այն ժամանակ ՀՀ իշխանությունն արագ փակեց դա, որովհետեւ Երեւանի կենտրոնում այլ ժողովրդի մշակույթին առնչվող շերտեր բացելը հակահայկական քայլ էր համարվում: Բայց քանի որ այս իշխանության քաղաքականությունն ուղղված է հայերին քոչվոր ներկայացնելուն, պատմական Հայաստանն ու հայերի բնիկ լինելու հանգամանքը ժխտելուն, ուստի ճիշտ ժամանակն է՝ հիշելու Հրապարակի տակ թաքնված օտար քաղաքակրթության հետքը: Դատելով հաղորդագրությունից՝ իշխանությունը պատրաստվում է մեծ փողեր ծախսել նախագծի վրա, որի իրականացումը կարող է տարիներ տեւել: Այսինքն, Հրապարակը տարիներով ավերակի է վերածվելու, ամբողջ կոնցեպցիան փոխվելու է, որ պարսկական բաղնիքը հանեն լույս աշխարհ:

Չնայած լրավամիջոցները երեկ գրեցին, որ ԱԺ պաշտպանության հանձնաժողովի նախագահի պաշտոնի համար գործող նախագահ Անդրանիկ Քոչարյանը եւս թեկնածություն է առաջադրել, սակայն մեր աղբյուրից տեղեկացանք, որ նա չի առաջադրվել, քանի որ գիտի, թե ում են ընտրելու, եւ չի ուզում Ալեն Սիմոնյանի վիճակում հայտնվել: Իսկ առաջադրման վերջնաժամկետը նախօրեին էր: Ըստ տեղեկությունների՝ առաջադրվել են Արմեն Խաչատրյանը, Հակոբ Սիմիդյանը, Վիլեն Գաբրիելյանի մասին էլ են խոսում, թեպետ նա 2 օր առաջ համառորեն հերքեց, որ չի առաջադրվելու: Ինքը՝ Քոչարյանը, օրեր առաջ ԱԺում լրագրողների հետ ճեպազրույցում հայտարարություններ արեց: Մոտավորապես հայտնեց, որ եթե այդ պաշտոնի թեկնածության հարցը լուծվի խմբակցությունում, ինքը կառաջադրվի: Հայտնի է, որ հարցը խմբակցությունում չի որոշվելու, այլ՝ ՔՊ վարչությունում: Մտերիմների կարծիքով, Քոչարյանը չի առաջադրվել՝ համարելով, որ կուսակցության ղեկավար մարմինը՝ վարչությունը, նախապատվությունը կտա կուսակցականներին, իսկ ինքն անկուսակցական է:

ՄԻ ՄԱՐԴ Է ՈՐՈՇՈՒՄ

Երկու օր է՝ ՔՊ-ականները, իրար հերթ չտալով, ծաղրում են, թե ինչպես «Ուժեղ Հայաստանի» 199 հոգանոց ցուցակը նոսրացավ, եւ ԿԸՀ-ին բացարկին ներկայացրին 105 հոգի: Դրանից առաջ եւս մեկ անձ էր դիմում ներկայացրել, եւ ցուցակում այժմ մնացել է 93 անուն: ՔՊ-ական մեր աղբյուրները տեղեկացրին, որ չնայած իրենց ցուցակում նման մասշտաբների ինքնաբացարկներ չկան, սակայն դա չի նշանակում, որ նախընտրական ցուցակում ընդգրկվածներից ում հերթը հասավ, խորհրդարան է մտնելու կամ պաշտոն է ստանալու: Դիցուք, մարզպետների գրեթե մեծ մասը, որ արդեն մի քանի տարի է՝ պաշտոնավարում է, ցանկություն ունի մտնել ԱԺ, որ առնվազն եւս հինգ տարով լուծեն իրենց աշխատանքի հարցը, մանավանդ՝ 2028-ին մարզպետների ինստիտուտը լուծարվում է: Սակայն պարզվում է՝ միայն Փաշինյանն է որոշում, թե ով է գնալու խորհրդարան, ով է մնալու գործադիրում, ով է պաշտոնի նշանակվելու: Երեկ արդեն Վաղարշակ Հակոբյանն ինքնաբացարկ հայտնեց: Հետո էլ են հնարավոր փոփոխություններ, ասենք՝ մի քանի ամիս հետո: Նորերի համար այս ամիսները նաեւ փորձաշրջան կլինեն, եւ Փաշինյանն ընթացքում կորոշի, թե ում պահել խորհրդարանում, ում տանել գործադիր: Տոտալիտար երկրներում նման հարցերը միանձնյա են լուծվում:

ՏԵՍՈՒՉ

ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՏԱՎՈՒՇԻ ՄԻ ՔԱՆԻ ԳՅՈՒՂ ԿԶՐԿՎԻ ԿԱՊԻՑ, ԿՄԵԿՈՒՍԱՆԱ

Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովը լրագրողների հետ զրույցում հայտարարել է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ շարունակվում են սահմանազատման եւ սահմանագծման աշխատանքները: Նրա խոսքով՝ գործընթացն իրականացվում է համապատասխան հանձնաժողովների շրջանակում եւ կրում է շարունակական բնույթ: «Այս աշխատանքը կանոնավոր կերպով շարունակվում է: Մենք արդեն ականատես ենք եղել դրա առաջին դրական արդյունքներին. պետական սահմանի շուրջ 13 կիլոմետրանոց հատված արդեն սահմանազատվել է»,- նշել է նա: Ադրբեջանի ԱԳ նախարարը նաեւ հայտնել է, որ կողմերի միջեւ ձեռք են բերվել որոշակի պայմանավորվածություններ: Նրա խոսքով՝ սահմանազատման գործընթացը կշարունակվի հայուսիսից հարավ ուղղությամբ, իսկ հետագա փուլերում քննարկման առարկա կդառնան նաեւ «էքսկլավային գյուղերի» հետ կապված հարցերը:

Հուլիսի 9-ին կայացած ճեպազրույցում Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ Տիգրանաշենի եւ Արծվաշենի հարցերը պետք է լուծվեն սահմանազատման գործընթացի շրջանակում: Նրա խոսքերով՝ սահմանազատումն իրականացվում է այն քարտեզների հիման վրա, որոնցում նշված են նաեւ այդ տարածքները, եւ հնարավոր չէ դրանք պարզապես անտեսել կամ դուրս թողնել գործընթացից: Նա ընդգծել է, որ նման մոտեցումը չի համապատասխանի Հայաստանի շահերին: Սակայն այս հայտարարությունից հետո սահմանազատման շարունակության վերաբերյալ հայաստանցիների անորոշությունն ու անհանգստությունը չփարատվեցին:

2024 թ. գարնանը Տավուշում իրականացված սահմանազատումն ապօրինի գործընթաց էր, քանի որ անգամ սահմանազատման կարգը մինչ այդ չէր ընդունվել, եւ պարզ չէր, թե ինչ քարտեզով են առաջնորդվում կողմերը, երբ հայտարարում են՝ այս հանուր 15 հեկտար հող, Բերքաբեր գյուղի մոտակա հենակետերը, Կիրանց-Ոսկեպար հատվածում գտնվող՝ շուրջ 30 տարի հայկական ամրացված բարձրադիր պաշտպանական դիրքերը:

Հիմա Ադրբեջանի արտգործնախարար Բայրամովը հայտնում է, որ սահմանազատումը շարունակվելու է Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի սահմանների հատման կետից: Այդ կետը Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Կողբ գյուղի «Ղիասի քար» տարածքի մոտ է, այսինքն՝ սահմանազատման շարունակությունը մեկնարկելու է Տավուշի մարզից: Նախկինում մենք անդրադարձել ենք այն խնդիրներին, որոնք առաջանալու են ԽՍՀՄ ժամանակ անկլավ հանդիսացած Վերին Ոսկեպար (Յուխարը Ասկիպար) գյուղի տարածքը սահմանազատումով Ադրբեջանին հանձնելու դեպքում: Նման խնդիրներ լինելու են նաեւ Իջեւան համայնքի տարածքում, Ազատամուտ-Կայան ավտոճանապարհի երկու կողմում գտնվող նախկին անկլավների՝ Բարխուդարլուի եւ Սոֆուլուի հանձնումով:

Իջեւան համայնքի Այգեհովիտ գյուղի վարչական ղեկավար Լեւոն Գրիգորյանն ասաց, որ անտեղյակ է սահմանազատման շարունակությունից, սակայն իրենց գյուղի շատ մեծ մակերեսով հողեր գտնվում են Ադրբեջանի վերահսկողության ներքո: Ազատամուտ բնակավայրի վարչական ղեկավար Արտակ Չոբանյանին հարցրինք՝ տեղյա՞կ է, որ գլոբալ տեղորոշման GPS համակարգով Ազատամուտ գյուղի որոշ հատվածներ արդեն ներկայացվում են որպես Ադրբեջանի տարածքներ: Նա ասաց, որ GPS-ն առաջնորդվում է Googl-ի քարտեզներով, որոնք պաշտոնական չեն, հավաստի չեն: Բայց մենք գիտենք, որ դրանցով են հաճախ առաջնորդվում սահմանազատում անողները: Ա. Չոբանյանը հայտնեց, որ Ազատամուտում տարածքներ կան, որտեղ պետական աջակցությամբ, վարկային միջոցներով,16 միլիոն դրամ արժեքով առանձնատներ են կառուցել ազատամուտցիները, GPS համակարգը հիմա դրանք ցույց է տալիս որպես Ադրբեջանի տարածք, սակայն դա Ազատամուտ գյուղի տարածքն է եւ Ազատամուտի հատակագծում է նշված:

Մեկ անգամ էլ շեշտենք, որ Սոֆուլու եւ Բարխուդարլու անկլավների տարածքներն Ադրբեջանին հանձնելու դեպքում խնդիրներ են առաջանալու Իջեւան-Բերդ տրանսպորտային հաղորդակցության համար: Շահագործման հանձնված Գանձաքար-Իծաքար ավտոճանապարհը միայն մասամբ կարող է լուծել այդ խնդիրը: Սակայն Սոֆուլուի եւ Բարխուդարլուի տարածքների հանձնումով Իջեւան համայնքի Կայգեհովիտ, Վազաշեն եւ Բերդ համայնքի Պառավաքար, Վարագավան, Վերին Ծաղկավան բնակավայրերը կարող են որոշակիորեն մեկուսանալ արտաքին աշխարհից, կտրվել տրանսպորտային ուղիներից: Այնպես, ինչպես եղավ Սյունիքի գյուղերի հետ, երբ Գորիս-Կապան մայրուղում 21 կիլոմետրանոց մի հատված հանձնվեց Ադրբեջանին:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌՅՈՒԾԻՆ ՈՒ ՎԱԳՐԻՆ ԹՈՒԹԱԿԻ ՎԱՆԴԱԿՈՒՄ ՉԵՆ ԿԱՐՈՂ ՊԱՀԵԼ

«Չեմ կարծում, որ նմանատիպ կենդանիներին հնարավոր է առանց որեւէ փաստաթղթի Հայաստան բերել, որովհետեւ մի քանի անցակետեր են անցնում»,- անդրադառնալով որոշ շրջանակների կողմից տարածվող լուրերին, թե Գագիկ Ծառուկյանը հնարավոր է անօրինական ճանապարհով Հայաստան բերած լինի սպիտակ առյուծին, մեզ հետ զրույցում ասաց Էնդեմիկ եւ վտանգված տեսակների պահպանման հիմնադրամի ղեկավար **Մանուկ Մանուկյանը**:

Ինչ վերաբերում է առյուծին քնեցնելուն, թե արդյոք կենդանաբանական այգու անասնաբույժը չէ՞ տիրապետում նման կենդանու քնեցման առանձնահատկություններին, ապա Մանուկյանը նշեց, որ քնեցնելուց առաջ բոլոր անասնաբույժները նախ ուսումնասիրում են տվյալ կենդանու պատմությունը, թե որ դեղի նկատմամբ ինչ ռեակցիա կարող է դրսեւորել, ինչ հիվանդություններ է ունեցել, ինչ բուժումներ է ստացել, նոր քնեցնել: «Սրանք նյուանսներ են, որոնք բոլոր անասնաբույժներն ուսումնասիրում են, նոր քնեցնում: Չեմ կարծում, թե կենդանաբանական այգու անասնաբույժն այնպիսի մասնագետ լինի, որ չուսումնասիրի կենդանու պատմությունը, ու առանց ուսումնասիրելու՝ բռնեն ու քնեցնեն: Կարող է այդ կենդանին որեւէ խնդիր ունի, նախ պետք է հասկանալ կենդանու վիճակը, նոր քնեցնել: Թե այնտեղ ինչ է եղել, ոնց է եղել, քանի որ տեղում չեմ եղել, դժվար է ասել: Ընդհանրապես, կենդանու հետ որեւէ գործողություն հրատապ պետք չէ անել: Կենդանիների հետ որեւէ հրատապ գործողություն անելուց միշտ խնդիր ես ունենում, ամեն ինչը պետք է նախապատրաստել՝ ուր ես տեղափոխելու, ոնց, ինչ պայմաններում ես պահելու, նախապես պլանավորված պիտի լինի ամեն ինչ: Հրատապ տեղափոխումը թույլատրելի է միայն ծայրահեղ պարագայում, երբ արդեն կենդանու կյանքին վտանգ է սպառնում: Բայց նույնիսկ հրատապ տեղափոխման դեպքում էլ կա դեղերի քանակ, թե ինչ դեղանյութով են նարկոզ տալիս, վիրահատության դեպքում խոր քնեցման համար են տալիս, այնինչ՝ տեղափոխության համար ավելի թույլ դեղերով են քնեցնում, նայած թե որ դեղն են օգտագործում: Քնեցնելուց հետո թթվածին պետք է տան, դեղեր կան, որ եթե չեն օգտագործում, թթվածին չեն տալիս, ժամանակ գոյություն ունի, որ այդքան ժամանակից հետո պիտի հակաթույնը ներարկես, որպեսզի կենդանին արթնանա, ճիշտ դոզան պիտի ներարկես: Չեմ կարող ասել, թե այնտեղ ինչ է եղել ու ոնց, ինչ դեղանյութ ու ինչ դոզայով են ներարկել: Միայն տեղում գործող անասնաբույժը կարող է ասել»,- ասաց Մանուկյանը:

Հետաքրքրվեցինք, թե արդյո՞ք կենդանաբանական այգին հարմար պայմաններ ունի՝ այնտեղ նեղոսյան կոկորդիլոսներ պահելու համար, որովհետեւ լուրեր էին տարածվել, թե Ծառուկյանի նեղոսյան կոկորդիլոսներին եւս պետք է տեղափոխեն կենդանաբանական այգի: Ի պատասխան, Մանուկ Մանուկյանն ասաց, որ եթե չունեն պայմաններ, պիտի հրաժարվեն կենդանուն տեղափոխելուց, քանի որ անթույլատրելի է այդ կենդանիներին վատ պայմաններում պահելը, ինչը կարող է հանգեցնել մահվան: Ասաց նաեւ, որ հինգ տարի առաջ է կենդանաբանական այգու փոխտնօրեն եղել, եւ հինգ տարի առաջվա իր ունեցած տվյալներով այգին կոկորդիլոսներին պահելու հնարավորություն չուներ, սակայն հինգ տարվա ընթացքում շատ բան կարող է փոխված լինել: Վայրի կենդանիների տեղափոխումը կարող է տեւել օրեր, իսկ երբեմն էլ՝ ամիս,- շեշտեց Մանուկյանը եւ հավելեց, որ տեղափոխումը պետք է հետաձգել, եթե բավարար պահման պայմաններ չունեն: «Կենդանիներին տեղափոխելուց հետո կարանտինային ռեժիմի մեջ է պետք պահել, հատուկ խնամք տարվի, կարանտինից հետո տեղափոխվեն այլ տարածք, որտեղ ավելի ազատ կլինեն, պայմաններն ավելի լավը կլինեն: Ի դեպ, կարանտինային պայմաններում մեկ ամիս կարող են պահել, բայց հետո հատուկ տարածք պետք է տրամադրեն կենդանիներին՝ դա պարտադիր է: Եթե մասնագետները որոշել են, որ պիտի տեղափոխեն, ուրեմն այդ պայմաններն ունեն, իսկ եթե չունեն պայմաններ, ո՞նց կարող են տեղափոխել: Չեմ պատկերացնում վագրին կամ առյուծին ինչ-որ թութակի վանդակում պահելը: Եթե կենդանաբանական այգու կոկորդիլոսի համար հատկացված հին տեղն էր, ապա այնտեղ չեն կարող տեղավորել, բայց կարծում եմ՝ երեւի թե ինչ-որ տարածք կա այգում, որտեղ կարող են տեղավորել»,- ենթադրեց Մանուկյանը:

Հարցին, որ եթե տեղափոխումից հետո կենդանիների անկման դեպքեր դարձյալ լինեն, ո՞վ է լինելու դրա հիմնական պատասխանատուն, Մանուկյանն ասաց, որ եթե կենդանին քո պատասխանատվության գոտում է, բնականաբար, այդ մարմինն էլ պատասխանատվության կրողն է: Այսինքն, կենդանաբանական այգին, որը փորձեց առյուծի մահվան մեղքը գցել նրա առողջական վիճակի վրա: Իսկ առյուծներին խնամողներն ասում են, թե զգուշացրել են, որ այդ օրը առյուծների չկերակրման օրն է, եւ քնեցումը կարող է անկանխատեսելի հետեւանքներ ունենալ:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ՄԻՊ

ՎԱՐՈՒՅԹ՝ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՄԱՐ. ՕՄԲՈՒԴՍՄԵ՞Ն, ԴԻՏՈ՞ՐԴ, ԹԵ՞ ՓՈՍՏԱՏԱՐ

Հուլիսի 8-ին Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներն այցելել են «Երեւան-Կենտրոն» ՔԿՀ-ում պահվող, իր առանձնատնից գազանաբար բերման ենթարկված Գագիկ Ծառուկյանին: Նրա ձերբակալման հանգամանքներն ու պահման պայմանները տեղում ուսումնասիրելուց հետո ՄԻՊ գրասենյակը հերթական ստանդարտ հայտարարությունն է տարածել՝ «պետական մարմիններից պարզաբանումներ եւ տեղեկատվություն ստանալուց հետո կամփոփենք ուսումնասիրության արդյունքները»:

Բոլոր այս «ուսումնասիրություններն» ու «վարույթները»՝ աղմկահարույց միջադեպերի շուրջ, սովորաբար ավարտվում են հենց պաշտոնական հաղորդագրությունների փուլում կամ անհետանում պետական գերատեսչությունների նամակագրություններում, իսկ հանրությունը չի տեսնում վերջնարդյունքը, խախտված իրավունքի վերականգնումը: Բոլորովին թարմ դեպք՝ ՄԻՊ աշխատողները հունիսի 25-ին անսպասելի այցելել էին ՆԳՆ Հատուկ կացարան, որտեղ ապրում են ապաստան հայցողները, եւ բազմաթիվ խախտումներ հայտնաբերել՝ հիգիենայի պայմանների, սննդի հետ կապված, մի երեխա էին գտել, որը դպրոց չէր գնում: Եվ ինչ: Որեւէ պաշտոնյայի պատասխանատվության ենթարկելու, աշխատանքից հեռացնելու մասին լուր չկա:

Նախընտրական շրջանում՝ մայիսյան եւ հունիսյան բողոքի ցույցերի, ակցիաների ընթացքում ոստիկանության կողմից քաղաքացիների եւ լրագրողների նկատմամբ կիրառված բռնությունների յուրաքանչյուր դեպքով ՄԻՊ-ը հայտարարում էր «սեփական նախաձեռնությամբ վարույթներ սկսելու» մասին: 2024 թ. հունիսի 12-ին, երբ Բաղրամյան պողոտայում արյունահեղություն էր, եւ ոստիկանները լուսաձայնային նռնակներ կիրառեցին, վիրավորվեց 100-ից ավելի մարդ, վիրավորված ցուցարարներից մեկի ձեռքը մինչեւ դաստակ ամպուտացվեց, ՄԻՊ Անահիտ Մանասյանը խոստացավ ուսումնասիրել տեսանյութերը: Ոչ մի ոստիկան պատասխանատվության չենթարկվեց: ՄԻՊ փափուկ միջամտությունը բերեց նրան, որ իրավապահները կանաչ լույս ստացան:

Հաջորդիվ քաղաքացիներին բերման ենթարկելու ձեւերն ավելի կոշտացան, իսկ լրագրողների հանդեպ ճնշումները սովորական դարձան: Իրավապահ համակարգը ստացավ անպատժելիության ազդակ, քանի որ ՄԻՊ-ը կոշտ իրավական գնահատական չտվեց հատուկ միջոցների կիրառման իրավաչափությանը, իսկ սկսված վարույթների արդյունքներով ոչ մի բարձրաստիճան ոստիկանի պաշտոնանկություն չեղավ: Նույն ցույցերի եւ դրանց հաջորդած իրադարձությունների ընթացքում արձանագրվեցին լրագրողների եւ օպերատորների նկատմամբ ոստիկանների կողմից ֆիզիկական ուժի կիրառման եւ տեխնիկայի ջարդման բազմաթիվ դեպքեր: Ինչ արեց Անահիտ Մանասյանը: Նա մտահոգություն հայտնեց, թե «լրագրողների գործունեությունը չպետք է խոչընդոտվի», արդյունքում մեդիայի նկատմամբ ուժայինների վերաբերմունքը դարձավ ավելի ագրեսիվ՝ Ազգային ժողովի շենքում պատգամավորների անվտանգության աշխատակիցներն անպատիժ ձեւով վիրավորում էին լրագրողներին, քաշքշում, նրանց հավատարմագրերից զրկում:

ՄԻՊ աշխատակազմի կողմից կիրառվող իմիտացիոն իրավապաշտպանությունն ամենալավը երեւում է հանրային հնչեղություն ունեցող կալանավորների օրինակով: Անդրդվելի հետեւողականությամբ, ՄԻՊ ներկայացուցիչներն այցելում էին Արմեն Աշոտյանին, Նարեկ Սամսոնյանին, լուսանկարվում, տարածում հաղորդագրություն, թե «հարցերը գտնվում են մեր ուշադրության կենտրոնում»: Բայց ինչ է փոխվում այդ այցերից հետո: Ոչինչ: Աշոտյանի նկատմամբ կիրառվող սահմանափակումները՝ զանգերի, տեսակցությունների արգելքը, ամիսներ շարունակ չէին վերացվում, իսկ պաշտպանական կողմը շարունակում էր հայտարարել քաղաքական հետապնդման եւ իրավունքների կոպիտ խախտումների մասին՝ փաստելով, որ ՄԻՊ այցերը կրում են զուտ ֆորմալ բնույթ: «Իմնեմնիմի» փոդքաստի հաղորդավարների նկատմամբ ոստիկանների կողմից անհամաչափ ուժ կիրառելու փաստով ոչ մի իրավապահ այդպես էլ պատասխանատվության չենթարկվեց, չնայած Մանասյանի՝ «իրավիճակն ուսումնասիրելու» խոստմանը: Պետական ապարատի գործողություններին չմիջամտելու եւ սեփական կաշին փրկելու մարտավարությանը ՄԻՊ-ը չի դավաճանում:

Եվ, ուրեմն, ո՞վ է Անահիտ Մանասյանը՝ պասիվ միջնորդ, փոստատմա՞ր՝ պետական գերատեսչությունների եւ քաղաքացու միջեւ, թե՞ մարդու իրավունքների պաշտպան, որը պետք է պահանջի՝ անհապաղ վերականգնել մարդու ոտնահարված իրավունքները: Կարո՞ղ են նշել գոնե մի քանի աղմկահարույց միջադեպ՝ Անահիտ Մանասյանի պաշտոնավարման 3 տարում, որ ՄԻՊ միջամտությունից հետո տեսանելի արդյունք է գրանցվել՝ հարցրինք ՄԻՊ խոսնակ **Լիլիթ Հովհաննիսյանին**: Նա մեզնից գրավոր հարցում պահանջեց՝ ասելով, թե 3 տարում այնքան շատ են եղել նման դեպքերը, որ իրենք միայն գրավոր հարցման դեպքում կարող են պատասխանել: Լավ, գոնե մի երկու-երեք դեպք կարո՞ղ եք նշել, որ ՄԻՊ վարույթների հիման վրա դատավճիռներ են կայացվել, կամ գոնե մեղադրական եզրակացություն է կազմվել: Սակայն անդրդվելի ՄԻՊ խոսնակը դարձյալ գրավոր հարցում պահանջեց:

Անահիտ Մանասյանը, անշուշտ, կարող է ասել, որ ՄԻՊ-ը պատժիչ կամ տուգանող մարմին չէ, նա միայն արձանագրումներ է անում, ամփոփում, հատուկ զեկույցների տեսքով ուղարկում մարմիններին, բայց այդ դեպքում ինչո՞ւ են բոլոր կատեգորիաների տուժողները հույս կապում այս կնոջ հետ: Որովհետեւ անո՞ւնն է հնչեղ՝ մարդու իրավունքների պաշտպան:

ՀԳ. *Հանուն արդարության պետք է նշել, որ ՄԻՊ գրությունների հիման վրա իրավապահները երբեմն քրեական վարույթներ նախաձեռնում են, օրինակ, 2026թ. փետրվարին լրատվամիջոցներով տարածված բռնության տեսանյութի հիման վրա: Քրեական ոստիկանության ծառայող Հայկ Հակոբյանը, փողոցում հայհոյանքներ հնչեցնելով, հարվածներ էր հասցնում քաղաքացուն: ՄԻՊ-ի միջամտությունից հետո նախաձեռնվեց քրեական վարույթ, նրան մեղադրանք առաջադրեցին Քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածի 1-ին մասով՝ խոշտանգում պաշտոնատար անձի կողմից, եւ երկու ամսով տնային կալանք սահմանեցին: Բայց սա, թերեւս, հանրությանը հայտնի եզակի դեպքն է: Կարելի է հիշատակել նաեւ մանկատներում, հոգեբուժարաններում ՄԻՊ աշխատակազմի արձանագրած առերեւույթ հանցագործության դեպքերը: Դրանցով ՄԻՊ-ը հանրությանը հպարտորեն զեկուցեց՝ «մեր դիմումի հիման վրա վարույթ է սկսվել», բայց վարույթները մնացին օդում: Թե այդ վարույթների արդյունքում քանի ոստիկան, քանի պաշտոնյա իրականում դատապարտվեց կամ հեռացվեց աշխատանքից, հայտնի չէ: Վարույթներն ամիսներով «քնում են» քննչականի դարակներում, մինչեւ որ բոլորը մոռանան դեպքերի մասին, իսկ ՄԻՊ-ն իր պարտքը համարում է կատարված՝ թղթաբանությունը փոխանցելով այլ գերատեսչության: Անահիտ Մանասյանի պաշտոնավարման ընթացքում չկա հանրային հնչեղություն ունեցող որեւէ դեպք, երբ ՄԻՊ-ի դիմումով հարուցված քրեական վարույթը հասած լինի դատավճռի: Իսկ երեկ մի հաղորդագրությունից տեղեկացանք, որ ՄԻՊ-ը «հերոսական» արարք է կատարել՝ աջակցել է, որ տնային կալանք կրող անձի նամակը հասնի փոստատուն. մինչ այդ պրոբացիոն ծառայությունը դրան խոչընդոտելիս է եղել:*

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ԹԵԺ ՄԱՐՏԵՐ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՔՊ-ում թեժ մարտեր են մղվում խորհրդարանի մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնների համար: Չնայած վերնախավը պարտիզանական պահվածք է դրսեւորում՝ չգաղտնազերծելով, թե ովքեր եւ որ հանձնաժողովի նախագահի համար են իրենց թեկնածություններն առաջադրել, սակայն թիմում ոմանք տեղյակ են թեժ մարտերից:

Նախ հիշեցնենք, որ ԱԺ 12 մշտական հանձնաժողովներից 9-ը, Դոնթի բանաձեւով, բաժին է հասնում ՔՊ-ին, 3-ը՝ «Ուժեղ Հայաստանին», իսկ «Հայաստան» դաշինքին հանձնաժողովի նախագահություն չի հասնում: Արդյո՞ք «ուժեղները», 2021-ին «Հայաստան»-ցիների օրինակով, մեկ հանձնաժողովի նախագահի պաշտոն կզիջեն գործընկերներին, դեռ պարզ չէ:

Սակայն ՔՊ-ական մեր աղբյուրներն ասում են, որ իշխանությունը 3 հանձնաժողովներից մեկի նախագահությունը՝ որեւէ ազդեցիկ հանձնաժողովում, զիջի ընդդիմադիր գործընկերներին: Հնարավոր է դա լինի Ժոկոյի դստեր՝ Ծովինար Վարդանյանի ղեկավարած ֆինանսավարկային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի կամ տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը: Երկրորդը, ըստ ամենայնի, կլինի մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովը, որը նախորդ խորհրդարանում Ռոբերտ Քոչարյանի դաշինքը մեծահոգաբար զիջեց «Պատիվ ունեմ»-ին, եւ այն ղեկավարում էր Թագուհի Թովմասյանը, մինչեւ որ նրան զրկեցին նախագահի աթոռից եւ հանձնաժողովը հանձնեցին ազգությամբ եզդի Ռուստամ Բաքոյանին: Երրորդը գուցե լինի աշխատանքի եւ սոցիալական հարցերի հանձնաժողովը:

Գալով նրան, թե որ հանձնաժողովի նախագահի համար են թեժ մարտեր մղվում, մեր աղբյուրների փոխանցմամբ՝ կրթության, գիտության, մշակույթի հարցերով հանձնաժողովի նախագահի պաշտոնի համար պայքարում է երբեմնի կապտամազիկ Թագուհի Ղազարյանը, որն իրեն գրեթե ԿԳՄՍ նախարար է երեւակայում եւ կարծում է՝ եթե իրեն նախարար չեն նշանակում, առնվազն պետք է գլխադասային հանձնաժողովը ղեկավարի: Նա վերջին տարիներին գրեթե անճանաչելի իմիջափոխվել է՝ հաղորդումներ ու փոթքաստներ է վարում: Այս հանձնաժողովը ղեկավարում էր Սիսակ Գաբրիելյանը, որը, սակայն, այժմ անտեր ու անտանիք է մնացել, որովհետեւ ջերմ հարաբերություններ ուներ Փաշինյանի աներձագ Հրաչ Հակոբյանի հետ, որն այս խորհրդարանում չկա, ինչպես նաեւ՝ Ալեն Սիմոնյանի թիմից էր համարվում: ՔՊ-ում վստահ են, որ նրան այս անգամ բախտը չի ժպտա, գուցե Թագուհուն կարգեն նախագահ:

Եվրահնտեգրման կամ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ են դիտարկում Մարիա Կարապետյանին, որը ցուցակում հետին հորիզոնականներն է զբաղեցնում, բայց եթե մի քանի տասնյակ մարդ տեղափոխվի գործադիր, հերթը նրան էլ կհասնի:

Պաշտպանության հանձնաժողովի նախագահի պաշտոնին, ըստ մեր աղբյուրի, հավակնում են Արմեն Խաչատրյանը, Հակոբ Սիմիդյանը, Վիլեն Գաբրիելյանը: Իսկ Անդրանիկ Քոչարյանը, մեր տեղեկություններով, չի առաջադրվելու: Ըստ ամենայնի, ՔՊ վարչությունն այս պաշտոնում կընտրի Արմեն Խաչատրյանին, դրանով նաեւ կփակի նրա՝ գործադիր տեղափոխվելու եւ ՆԳ նախարար նշանակվելու հավակնությունները:

Գրեթե որոշված է, որ պետահրավական հարցերով մշտական հանձնաժողովը կշարունակի ղեկավարել Արուսյակ Ջուլհակյանը, նրան ԱԺ փոխնախագահի պաշտոնին չեն նշանակել հենց այս խոստումով: Ասել են՝ հանձնաժողովի ղեկավարի հարմար թեկնածու չունենք: Խոսում են նաեւ, որ տարածքային, տնտեսական հանձնաժողովներն էլ, համապատասխանաբար, կշարունակեն ղեկավարել Փաշինյանի քավորեղբայր Վահե Ղալումյանը եւ Բաբկեն Թունյանը: Արդեն գրել ենք, որ ՔՊ-ում խուլ դժգոհություն կա, որ պառլամենտական կառավարման համակարգում խորհրդարանականները զրկված են որոշումներ կայացնելու իրավունքից՝ անգամ հանձնաժողովների նախագահներին ՔՊ վարչությունը, այսինքն՝ Փաշինյանն է ընտրում:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԴԻԼԻՋԱՆ

Մայիսի 11-ին Գլխավոր դատախազություն տեղեկատվական հարցում եմ ուղարկել, հունիսի 16-ին ստացել եմ պատասխան, որտեղ ուղարկածս 5 հարցից միայն 1-ի պատասխանն են տվել: Հունիսի 18-ին Գլխավոր դատախազություն նոր հարցում եմ ուղարկել՝ խնդրելով պատասխանել.

«1. Դիլիջանում Հայկ Ռոբերտի Ղազարյանին ապօրինի օտարված

5 ՏԱՐԻ ՄԻ ԳՈՐԾՆ ԵՆ ՔՆՆԵԼ, 6 ԱՄԻՍ՝ ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԸ

հողամասի վերաբերյալ դատախազությունն օրենքով սահմանված կարգով դիմե՞լ է դատարան, որպեսզի անօրինական օտարված պետական հողը վերադարձվի պետությանը, այդ խնդրով Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի նկատմամբ քրեական գործ հարուցվե՞լ է. ի՞նչ կարգավիճակ ունի Սարգսյանը:

2. 2018 եւ 2025 թթ. ՀՀ-ում քրեական հետապնդման ենթարկված քանի՞ անձ է եղել, դրանցից քանիսի՞ նկատմամբ է դատարանների կողմից կալանքն ընտրվել որպես խափանման միջոց:

3. 2018 եւ 2025 թթ. ՀՀ-ում քանի՞ հանցագործություն է արձանագրվել, դրանցից քանի՞սն է եղել ծանր եւ առանձնապես ծանր:

4. Իջեւանում Աղստեւ գետի հունի ավերման, այդ հունում Իջեւանի գինու, կոնյակի գործարանի կողմից ապօրինի մեծ պատ կառուցելու կապակցությամբ 2021թ. հոկտեմբերի 15-ին Քրեական օրենսգրքի 308 հոդվածի 1-ին մասով եւ 290 հոդվածի 1-ին մասով քրեական վարույթ է նախաձեռնվել, որը քննվում է Հակակոռուպցիոն կոմիտեում: Գլխավոր դատախազությունն այդ վարույթով դատախազական հսկողություն իրականացնո՞ւմ է, չի՞ խախտվել վարույթը ողջամիտ ժամկետում քննելու պահանջը: Այդ վարույթով որեւէ անձի մեղադրանք առաջադրվե՞լ է»:

ՀՀ գլխավոր դատախազությունից պատասխանել են. «Դիլիջանի համայնքապետարանի իրավասու պաշտոնատար անձանց կողմից պաշտոնեական անփութություն կատարելու դեպքի առթիվ Տավուշի մարզի դատախազության կողմից դեռեւս 21.01.2026թ. ներկայացվել է առերեւույթ հանցագործության մասին հաղորդում, որի հիման վրա ՀՀ քրեական օրենսգրքի 446-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ, որի նախաքննությունը կատարվում է ՔԿ ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում: Նախաքննությունը շարունակվում է: Հարցման 2-րդ եւ 3-րդ կետերի վերաբերյալ տեղեկությունն առկա է Դատախազության գործունեության մասին տարեկան հաղորդումներում: Հարցման 4-րդ կետի վերաբերյալ տեղեկացնում եմ, որ քրեական վարույթը կարճվել է՝ Քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ որեւէ հանցանքի բացակայությունը հաստատվելու, եւ Քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված՝ անձանց նկատմամբ քրեական հետապնդում չհարուցելու եւ վարույթը շարունակելու բոլոր հնարավորությունները սպառված լինելու հիմքերով»:

Գլխավոր դատախազությունը չի հայտնել՝ դատախազությունն օրենքով սահմանված կարգով դիմե՞լ է դատարան, որպեսզի Դիլիջանի ազգային պարկի տարածքում ՆԳ նախկին նախարար Վահե Ղազարյանի եղբորը՝ Հայկ Ղազարյանին (փաստացի՝ Վ. Ղազարյանին) անօրինական կերպով, «անփութորեն» օտարված պետական հողը վերադարձվի պետությանը, այդ խնդրով Դիլիջան համայնքի ղեկավար Դ. Սարգսյանի նկատմամբ քրեական գործ հարուցվե՞լ է, ի՞նչ կարգավիճակ ունի նա:

2020 թվականից Իջեւանի գինու, կոնյակի գործարանն ապօրինի կերպով, Աղստեւ գետի հունը փոխելու նպատակով, գետի հունում երկար, մեծ բետոնե պատ էր կառուցել, որի հետեւանքով դենդրոպարկը մնացել է առանց ոռոգման ջրի, այգում չորացել են շուրջ 25 հազար տնկի, 1500-ից ավելի հազվագյուտ ծառեր ու թփեր, որոնցից մոտ 250 տեսակ վերացվել է՝ դենդրոպարկին պատճառելով միլիոնավոր դոլարների վնաս: Սակայն 5 տարի շարունակված քննությամբ որոշվել է, որ հանցագործություն չկա, վարույթը շարունակելու բոլոր հնարավորությունները սպառված են, թեեւ ամեն ինչ առանց քննության էլ բացահայտ էր: Սա Նիկոլ Փաշինյանի իշխանության օրոք իշխանության հետ սերտ կապեր ունեցողների հանդեպ արդար քննություն չիրականացնելու, քրեական գործեր չհարուցելու ցայտուն օրինակ է:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՏՈՆՆԱՆԵՐՈՎ ԾԻՐԱՆ ԵՆ ՏԱՐԵԼ ՌՈՒՍԱՍՏԱՆ՝ ՓԱՌԱՏՈՆԻ

Հայաստանից Ռուսաստան ծիրանի արտահանման սահմանափակումների ֆոնին, Մոսկվայում հուլիսի 5-ին անցկացվել է հայկական «Ծիրանի» փառատոն: Միջոցառումը կազմակերպել է Ռուսաստանի հայերի միությունը՝ ՌԴ նախագահին առընթեր միջազգայնական հարաբերությունների խորհրդի եւ Մոսկվայի կառավարության (Ազգային քաղաքականության եւ միջտարածաշրջանային կապերի վարչության) աջակցությամբ: Զրուցել ենք Մոսկվայի եւ մերձմոսկովյան հայ համայնքների ղեկավար **Արտյոմ Վարդանյանի** հետ:

- «Ծիրանի» փառատոնի համար հայկական ծիրան է օգտագործվել. ի՞նչ ճանապարհով է Ռուսաստան արտահանվել, չէ՞ որ արգելված է մուտքը:

- «Ծիրանի» փառատոնը տարիներ շարունակ անցկացնում ենք, որին մասնակցում են հազարավոր հայեր: Փառատոնի շրջանակում երգ, պար, մշակութային միջոցառումներ են տեղի ունենում, իսկ ծիրանը հյուրասիրում ենք բոլոր մասնակիցներին: Ինչ վերաբերում է արտահանմանը, երբ որ Արցախի ճանապարհները փակ էին, մենք այդ ժամանակ էլ Արա Աբրահամյանի գլխավորությամբ կարողացանք մեծ օգնություն անցկացնել դեպի Արցախ: Այսինքն, նույն մեխանիզմով, միջոցառման հետ կապված այլ ճանապարհներով հայկական ծիրանը տեղ է հասել, որպեսզի մեր հայրենակիցներին հյուրասիրենք:

- Կարծիք կա, որ ծիրանը հայկական չի եղել:

- Գիտեք ինչ՝ կարծիքները տարբեր են, յուրաքանչյուր մարդ ունի իր հնարավորությունը եւ իր հնարավորությունների շրջանակներում իրականացնում է իր ցանկությունները: Իսկ ճանապարհները, ինչպես նաեւ մեխանիզմներն ու հնարավորությունները, տարբեր են: Այս առումով մենք որեւէ խնդիր չենք ունեցել:

- Քանի՞ կգ ծիրան եք ներկրել Ռուսաստան:

- Կիլոգրամի հետ կապված՝ չեմ կարող ասել, բայց այնքան, որ կարողացել ենք հյուրասիրել միջոցառման բազմահազարանոց մասնակիցներին: Խոսքը տոննաների մասին է, եւ դա իրականացրել ենք մեկանգամյա ներկրումով:

- Հակասություն չե՞ք տեսնում՝ Մոսկվայում անցկացվում է «Ծիրանի» փառատոն, երբ Հայաստանի ծիրանի արտահանումը դեպի Ռուսաստան արգելված է:

- Բացարձակ, եթե միջկառավարական խնդիրներ կան, դա չի նշանակում, որ մենք մեր մշակութային ծրագրերը չպետք է իրականացնենք: Այդ ծրագրերը տարիներ շարունակ իրականացվել են, եւ դա մեր ինքնությունն է:

- Հնարավոր չէ՞, որ օգնեք հայ տնտեսվարողներին, որպեսզի նույն՝ ձեր արտահանած ճանապարհով ծիրանն արտահանեն Ռուսաստան:

- Դա միջկառավարական խնդիր է, իսկ մենք հասարակական կազմակերպություն ենք: Մարդասիրությունից ելնելով, այո, Հայերի միությունը՝ ղեկավարի գլխավորությամբ, տարիներ շարունակ բազմաթիվ հարցեր է կարգավորել, լուծել:

Նյութերը՝ Արմինե ՆԱՎՈՅԱՆԻ

Տոննաներով պտուղ-բանջարեղեն է արգելվել Հայաստանից արտահանել

Հայաստանից դեպի Ռուսաստան մի շարք ապրանքատեսակների արտահանման սահմանափակումների պատճառով բազմաթիվ տնտեսվարողներ ստիպված են վերանայել իրենց արտահանման ուղղությունները եւ նոր շուկաներ որոնել: Սակայն նոր շուկա մուտք գործելը ենթադրում է ոչ միայն նոր գործընկերներ գտնել, այլեւ տվյալ երկրի պահանջներին համապատասխանեցում: Դա ներառում է արտադրանքի համապատասխանեցում գործող տեխնիկական եւ որակի չափանիշներին, անհրաժեշտ ֆիտոսանիտարական եւ սերտիֆիկացման պահանջների կատարում, պատշաճ փաստաթղթավորման ապահովում, ինչպես նաեւ՝ թիրախային շուկայի պահանջներին համապատասխան առեւտրային եւ մարքեթինգային առաջարկի մշակում: Այս պահանջները եթե չկատարվեն, արտահանվող խմբաքանակը չի ընդունվի ներմուծող երկրի կողմից, կվերադարձվի կամ կենթարկվի ոչնչացման: Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնից հետաքրքրվեցինք, թե Ռուսաստանի կողմից կիրառվող սահմանափակումների ֆոնին դեպի այլ շուկաներ արտահանվող ինչ բեռներ են հետ վերադարձվել, կամ եղե՞լ է դեպք, որ ընդունող երկրները տեղում ոչնչացման ցուցում տան: Միաժամանակ խնդրեցինք տեղեկություն տրամադրել, թե վերջին մեկ ամսվա ընթացքում ինչ բեռների արտահանում կամ ներմուծում է Հայաստան արգելվել:

Ի պատասխան, ՍԱՏՄ-ից հայտնեցին, որ հունիսին արգելվել է ՀՀ ներմուծել հետեւյալ բեռները՝ Իրանից 14 600 կգ թարմ պղպեղ, կարանտին համարվող արեւմտյան ծաղկային թրիպսի կենդանի առանձնյակներ ցուցանիշով պայմանավորված, 900 կգ լոլիկ, քանի որ պարունակել են լոլիկի ցեցի թրթուրներ, Թուրքիայից՝ 26 857 կգ թարմ դեղձ, 13 730 կգ թարմ նեկտարին՝ կարանտին համարվող արեւմտյան ծաղկային թրիպսի կենդանի առանձնյակներ ցուցանիշով, եւս 7 600 կգ թարմ նեկտարին՝ կրկին նույն ցուցանիշով, ինչպես նաեւ՝ կալիֆոռնիական վահանակիրի առկայությամբ, 90 կգ թարմ սալոր՝ կարանտին համարվող կալիֆոռնիական վահանակիր ցուցանիշով: Վրաստանից՝ 17 000 կգ թարմ նեկտարին՝ կրկին կարանտին համարվող արեւմտյան ծաղկային թրիպսի կենդանի առանձնյակներ ցուցանիշով: Իրանից 9070 կգ քաղցրահամ գունավոր բուլղարական պղպեղ՝ կարանտին համարվող արեւմտյան ծաղկային թրիպսի կենդանի առանձնյակներ ցուցանիշով, կալիֆոռնիական վահանակիր, 145 կգ թարմ կանաչ սալորի մուտքն է արգելվել՝ կարանտին համարվող կալիֆոռնիան վահանակիր ցուցանիշով:

Իսկ ՀՀ-ից արգելվել է արտահանել թարմ թութ՝ 13 341 կգ, պղպեղ՝ 34 563 կգ, թարմ պղպեղ՝ 14 032 կգ, գունավոր բուլղարական պղպեղ՝ 13 250 կգ, թարմ կտրած հերբերա՝ 132 կգ, թարմ կտրած մեխակ՝ 40 000 կգ, թարմ կտրած ալստրոմերիա՝ 303 կգ, թարմ կտրած լիզիանթուս՝ 356 կգ: Բոլոր դեպքերում պատճառը կարանտին համարվող արեւմտյան ծաղկային թրիփսի կենդանի առանձնյակների ցուցանիշն է:

ՍԱՏՄ-ից հայտնեցին նաեւ, որ ոչնչացնելու կամ վերադարձնելու որոշումը կայացվում է տնտեսվարողի կողմից: Տեղում, այսինքն՝ սահմանին, ոչինչ չի կարող ոչնչացվել, սակայն ՍԱՏՄ-ն չունի առանձին ցուցանիշներ, թե որ երկրից ինչ է վերադարձվել:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՆՎԱՍՏԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԲԽՈՂ ՆԵՐՔԻՆ ՀԻՍՏԵՐԻԱՆ

Շաբաթվա սկզբից ուսապարկերն իրենց ռեպերտուարի մեջ էին, մոտավորապես «մահվանից առաջ՝ հարսանիք» խելահեղության տրամաբանությամբ: Անկախ հունիսի 7-ի ընտրությունների՝ ԿԸՀ-ի կողմից խեղված արդյունքներն ուժի մեջ թողնելու ՍԴ որոշումից, ՔՊ-ականները եւ հատկապես նրանց պարագլուխ Նիկոլ Փաշինյանը հրաշալի գիտակցում են, որ 1991-ի անկախության վերականգնումից ի վեր Հայաստանի պատմության վատագույն ընտրություններից մեկն էր սա: Ոչ միայն այն պատճառով, որ, ինչպես եվրոպացի դիտորդները հունիսի 8-ին, ըստ էության, արձանագրեցին, այնպես էլ այն, որ որեւէ գիտակից անձ չի կարող դրանք ազատ կամ արդար կոչել: Այդ ընտրությունները վատագույնն էին իշխանության կողմից երբեւէ գործադրված տոտալ ճնշումների, իրավական համակարգը սեւ քարոզչության գործիք դարձնելու, թոշակների, ապահովագրության, զինծառայության ժամկետի կրճատման ու չգիտես էլ ինչ տեսքով եւ անունների ներքո բաժանված աննախադեպ ծավալների ու համատարած ընտրակաշառքների արդյունքում, ինչը որեւէ նախկին իշխանություն չէր արել: Նախկինները 5.000-10.000 դրամ էին բաժանում, իսկ ուսապարկերը ամեն հնարավոր նյութական ու ոչ նյութական ընտրակաշառք բաժանեցին՝ ցուցադրաբար ու համատարած, ու այդքանից հետո ձայներ չստացան, ստիպված եղան ընտրակեղծիքի, ԿԸՀ-ի կողմից Ընտրական օրենսգիրքը ոտնահարելու ճանապարհով ԲՀԿ-ից ձայներ ու մանդատներ գողանալ: Ցավալի է, որ բացեիբաց գողացված ձայներն ու մանդատները գոնե ՍԴ որոշմամբ ԲՀԿ-ին չվերադարձվեցին:

Սակայն կարեւորն այն է, որ խորհրդարան անցած ընդդիմադիր ուժերի ձեռքում դեռ կան խաղաթղթեր, եւ առջեւում կարող են լինել էական, որոշիչ զարգացումներ: Առայժմ, սակայն, տեսանելի է միայն այն, որ Փաշինյանի նյարդային հրահանգների, կատարելապես հիմնազուրկ գործողությունների արդյունքում հունիսի 7-ից ի վեր Հայաստանում կրքերը ոչ թե հանդարտվում են, այլ միայն՝ շիկանում: ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանին առնչվող տասնյակ տնտեսական կառույցներում աշխատանքը դադարեցնելը՝ պետության հարկադիր միջամտությամբ, մեկ օրում, առանց հիմնավորման, ոչ միայն պետականության, օրինականության, այլեւ գիտակցության ու տրամաբանության իսպառ բացակայության դրսեւորում է: Իսկ այդ, թող ներվի այս բառը՝ անասնական հարձակումը Գագիկ Ծառուկյանի վրա, իր առանձնատանը, հետո էլ այդ կադրերը հրապարակելը ոչ միայն փաշինյանական կամակատարների հանցավորության, այլասերվածության ու բարոյազրկության գագաթնակետն էին, այլեւ ուղղակի մարդկային վարվեցողության նորմերից հեռու փողոցային խուժանի վարք: Սակայն ամենաեականը՝ Ծառուկյանի հանդեպ այդ գիշատչային հարձակումը, գետնին տապալելու կենդանական մղումը ցուցիչ էին մի իրականության, որ Փաշինյանի խելահեղությունը հասել է Ջորջ Օրուելի «Անասնաֆերմայի» մեջ նկարագրված մոլագարությանը: Դրականն այդտեղ այն է միայն, որ մոլեգնության հասած կենդանիները սովորաբար իրենք են անշնչանում:

Կարծում եմ՝ Փաշինյանին մոլեգնության հասցրեց ոչ միայն ամեն քայլափոխի բախումների վերածված ՔՊ-ական ընտրարշավը՝ հասարակության անթաքույց արհամարհանքով իշխող ուժի հանդեպ: Նաեւ արտաքին գործոնները, գրեթե բոլոր միջազգային կենտրոնների մի փոքր քողարկված արհամարհանքը Փաշինյանի հանդեպ, որը նրան գցել է ծուղակը, եւ որտեղից չի փրկի ոչ մի ընտրությունների արդյունքների կեղծում եւ չի օգնի դուրս գալ:

Հունիսի 7-8-ին հարեւան Թուրքիայում, Անկարայում գումարվել էր ՆԱՏՕ-ի տարեկան գագաթնաժողովը: Դատելով միջոցառման արդյունքներով ընդունված հռչակագրից՝ դա ոչ մի շոշափելի արդյունք չգրանցած, ձեւական միջոցառում է եղել, որտեղ իրադարձությունները միայն Թրամփի հայտարարություններն էին, ամենաուշագրավն էլ Իրան-ԱՄՆ Փոխըմբռնման հուշագրի գործողության ավարտի ազդարարումն էր: Այնքան ձեւական, որ մի ներքին կարեւոր քննարկումներ չունեցած գագաթնաժողով էր, որ Ուկրաինայի եւ Սիրիայի նախագահների ներկայությունն էր այդտեղ իրադարձություն: Հետեւաբար, եթե լիներ Վաշինգտոնի բարի կամքը, խաղաղության գործընթացի, TRIPP ծրագրի համատեքստում, որպես ողջ Մերձավոր Արեւելքում եւ Արեւելյան Եվրոպայում՝ ԱՄՆ-ի հետ համապարփակ ռազմավարական գործընկերություն ունեցող միակ երկրի՝ Հայաստանի ներկայացուցիչ, հյուրի կարգավիճակով Անկարա կհրավիրվեր նաեւ ՀՀ նախագահը կամ վարչապետը: Այն ռազմավարական համագործակցությունը, հատկապես Հայաստանի սահմանների եւ TRIPP-ի առնչությամբ, որ ԱՄՆ-ն հաստատել է Հայաստանի հետ, դա նվազագույնն է, ինչ պետք է արվեր: Իսկ Փաշինյանին, ի տարբերություն Վոլոդիմիր Զելենսկու եւ Ահմեդ ալ Շարաայի, չէին հրավիրել, ու դա գալիս է հենց արհամարհանքից:

Ռուսաստանի կողմից աջուձախ արգելվող հայաստանյան գյուղմթերքի ներմուծման խորքին Փաշինյանը ճամարտակում էր, թե ընտրություններից անմիջապես հետո կմեկնի Մոսկվա եւ ծագած խնդիրները կկարգավորի: Մինչդեռ Փաշինյանին նվաստացրին այնքան, որ Մոսկվայի փոխարեն հարկադրված եղավ խնդրել, որ գոնե Եկատերինբուրգ հրավիրեն, որտեղ նրան չդիմավորեց որեւէ մեկը ՌԴ նախագահի կամ վարչապետի շրջապատից, գոնե նրանց աշխատակազմերից, այլ ուղարկել էին ՌԴ ԱԳՆ արձանագրային բաժնի պետի տեղակալին: Եկատերինբուրգում Փաշինյանը ՌԴ վարչապետին հանդիպեց եւ ոչ մի հարց էլ չկարգավորեց՝ հակառակ գետնատարած պահվածքին եւ ռուսական բիզնեսի համար Հայաստանում առավել նպաստավոր պայմաններ խոստանալուն: Էլ չասած, որ քծնելու շրջանակներում ՀՀ ԱԳՆ-ից մի «մտավոր գերզարգացած» էլ մինչ այդ հայտարարել էր, թե TRIPP-ը ԵԱՏՄ կանոնակարգերով կաշխատի:

Իսրայելում էլ երկու ռեզոնանսային իրադարձություն եղավ՝ Հայաստանին առնչվող, որոնց կապակցությամբ Փաշինյանը գլուխը «կախեց» ու նախընտրեց ձայն չհանել: Առաջինը. 2026թ. հունիսի 6-ին Վաշինգտոնից տարածվեց CNN-ի ընդարձակ լրագրողական հետաքննությունը, որտեղ բացահայտվում էր, որ Իրանի դեմ ռազմական գործողությունների համար Իսրայելը ոչ միայն վաղուց լրտեսական ամրություններ եւ զինտեխնիկա է տեղակայել Ադրբեջանում, այլեւ պատերազմի ժամանակ անձնակազմ է գործուղել Ադրբեջան եւ երկրի հարավից (ենթադրաբար, նաեւ Արցախի՝ օկուպացված տարածքներից) ռազմական հարձակումներ է իրականացրել Իրանի դեմ: Ինչն արժե մեծատառերով գրել՝ Իսրայելի կառավարությունը CNN-ի պաշտոնական հարցմանն ի պատասխան, տեղեկատվությունը չէր հերքել: Բաքվում Ալիեւի լաբեյներից Հիքմեթ Հաջիեւն էր իբր հերքել CNN-ի տեղեկատվությունը, սակայն նրա ասածները կարող է հաշվի առնել, դիցուք, ՀՀ ԱԽՔ Արմեն Գրիգորյանը, որը նրան Դիլիջան էր հրավիրել, բայց ոչ՝ մնացյալ աշխարհը:

Երկրորդ. ավելի հզոր քայլը Իսրայելի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումն էր, այն ժամանակ, երբ Փաշինյանն իբր հայոց պետականությունն ամրացնելու անվան ներքո զբաղված է հավաքական հայության կառույցներին, ինքնությանն ու իրավունքներին անկանոն ու անգիտակից հարվածներ հասցնելով, դրանք երբեմն իրապես վտանգելով: Իսկ Իսրայելի կառավարությունում հիմարներ չեն նստած: Եթե Իսրայելի գոյության ողջ ընթացքում՝ 78 տարի, Հրեից պետությունը չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը, իսկ այսօր ճանաչում է, նշանակում է՝ Իսրայելում գիտակցում եւ կանխատեսում են, որ առաջիկա տարիներին հայոց իրավունքները, ցեղասպանությունն ու Սեւրի դաշնագիրը հնարավոր է դառնան Մերձավոր Արեւելքում զարգացումների լեյտմոտիվ: ԱՄՆ-ն հենց այնպես չէ Հայաստանում հաստատվում... Փաշինյանն այնքան թուլամիտ է, որ Հայաստանի ղեկավարի պաշտոնում ի զորու չէ հայության առնչությամբ գիտակցել այն, ինչ մարդիկ Իսրայելում ոչ միայն տեսնում են, այլեւ համընթաց քայլում:

Վերջապես, Փաշինյանին Բրյուսել նույնպես չհրավիրեցին: Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը ժամանեց Հայաստան: Սակայն որքան էլ փաշինյանական քարոզչամեքենան եւ պրոռուսական մեդիա-փորձագիտական շրջանակների կարճամիտ դատողությունները Եվրահանձնաժողովի նախագահի այցը ներկայացնեն իբրեւ Փաշինյանին աջակցություն, ամենից մեծ խնդիրը Փաշինյանի համար հենց այդ այցն ազդարարեց: Ֆոն դեր Լայենի՝ Բաքվում թե Երեւանում կատարած բոլոր հայտարարությունների շարքում միակ գործնական ու ապագա կանխորոշող արձանագրումն այն էր, որ ՀՀ-ի համար բացվում է ԵՄ շուկան: ԵՄ-ն Հայաստանում կառույցներ է ստեղծում, որ թույլ կտան մի թռիչքով, երկու տարում Հայաստանը հասցնել DCFTA (Խոր եւ համապարփակ ազատ առեւտրի համաձայնագրի) գործադրման եւ ԵՄ-ի հետ տնտեսական ասոցացման նույն մակարդակին, որին 2013-ին ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագրեր կնքած Ուկրաինան, Մոլդովան եւ Վրաստանը մեկեւկես տասնամյակում դեռ չեն հասել: Ինչո՞ւ է Հայաստանը թռիչքաձեւ հասցվում Ուկրաինայի, Մոլդովայի, Վրաստանի մակարդակին: Հաստատ՝ ոչ նրա համար, որ Փաշինյանն իր կրիայի քայլերով տեսնի՝ երբ կարող ենք հասնել ԵՄ չափանիշներին: ԵՄ-ն ուղիղ ներգրավմամբ Հայաստանը հասցնում է այն մակարդակին, որպեսզի 2028-ին Ուկրաինայի եւ Մոլդովայի հետ Acquis-ի 31 գլուխների բանակցություններն ավարտելով, այդ փորձով եւ ավելի արագ 2028-ին սկսի եւ 2030-ին ավարտի նույն բանակցությունները Վրաստանի եւ Հայաստանի հետ՝ բոլոր 4 պետություններին դարձնելով պատրաստ՝ հայտարարված 2030-ի ընդլայնման շրջափուլում ԵՄ-ին անդամակցելու: Կարելի է ասել՝ Մոսկվան եւ Բրյուսելը Հայաստանի առնչությամբ ուղիղ հարաբերություններ են պարզում. Մոսկվան պահանջում է ԵՄ անդամակցության հարցով Հայաստանում հանրաքվե անցկացնել, Բրյուսելն էլ, ի պատասխան, Հայաստանը թռիչքաձեւ արագությամբ հասցնում է ԵՄ-ին անդամակցելու մակարդակի:

Այնպես որ, բոլորը գործում են արագ եւ վճռական, նույնիսկ ջանք չթափելով՝ Փաշինյանին կատարվողը բացատրել, էլ ուր մնաց՝ Փաշինյանին հաշվի առնել: Իսկ Փաշինյանն իր անմեղսունակ ու «գլուխը կախ» վիճակում ո՛չ կարողանում է շուրջբոլորը կատարվողը հասկանալ, ո՛չ համարժեք արձագանքել, հագիվ փորձում է այդ ահռելի զարգացումների հորձանուտում մի երկու քարոզչական փուչիկ օդ արձակել: Միջազգային զարգացումներից գլուխ չհանելով՝ Փաշինյանը հույսը դրել է նրա վրա, թե ներքին տեռորով Հայաստանում իշխանություն կպահի: Մինչդեռ, ներքին հիստերիան ու տեռորը կարող են ընդվզում պայթեցնել եւ ուսապարկերի համար վերջաբան նշանակել:

Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ
lusine@hraparak.am

ՍՅՈՒԺԵՏ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի այցը Եկատերինբուրգ եւ մասնակցությունը «Ինոպրոմ 2026» միջոցառմանը՝ սկսել են անվանել ընտրություններից հետո նրա առաջին դիվանագիտական այցը: Սակայն իրականում Փաշինյանն առաջին այցն իրականացրել է Թեհրան՝ մասնակցելու Իրանի սպանված գերագույն առաջնորդ Ալի Խամենեիի հուղարկավորությանը:

ՄՈՍԿՎԱՆ ԻՆՉ ԳԻՆ ԿՎՃԱՐԻ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՀԵՏ ՀՆԱՐԱՎՈՐ «ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ» ՀԱՄԱՐ

Թեհրան ու Եկատերինբուրգ այցերը երկու կարեւոր ազդակ են պարունակում՝ գրում է Սերգեյ Մարկեդոնովը: «Ըստ էության, հասկանալի է, որ Հայաստանի ղեկավարությունն ինչ էլ անի, աշխարհագրությունից փախչել չի կարող: Տնտեսական կապերն էլ շարունակում են մնալ կարեւոր՝ անկախ քաղաքական տարակարծություններից կամ հակասություններից: Կարելի է ինչքան ասես խոսել եվրոպական վեկտորի մասին, սակայն Իրանը շարունակում է մնալ Հայաստանի հարեւանը, որը նաեւ ապահովում է Հայաստանի չորս սահմանակից երկրներից երկու բաց սահմաններից մեկը: Ռուսաստանը շարունակում է մնալ Հայաստանի խոշորագույն առեւտրային գործընկերը, եւ Ռուսաստանին է բաժին ընկնում Հայաստանի արտաքին ողջ առեւտրի 35 տոկոսը»:

Մարկեդոնովը, իհարկե, ճիշտ է արձանագրում: Սակայն ինքներս էլ մեր կողմից արձանագրենք, որ Ռուսաստան այցով հարցերը կարգավորվել են՝ սխալ է: Փաշինյանը Ռուսաստան է այցելում, զուգահեռաբար՝ ռուսամետ քաղաքական ուժերի եւ գործիչների հանդեպ Հայաստանում ճնշումները մեծանում են: Սա՝ այն դեպքում, երբ ապրիլին Փաշինյանի հետ նախագահ Պուտինի հանդիպման ժամանակ Պուտինը հատուկ խնդրել էր խուսափել նմանատիպ միջադեպերից: Սակայն դրանք շարունակվեցին թե՛ ընտրական պրոցեսում, թե՛ դրանց ավարտից հետո: Ու դա հասկանալիորեն ակնարկ էր պարունակում իր մեջ, որ Պուտինի խնդրանքը Փաշինյանը որոշել է անտեսել: Ընդհանուր առմամբ՝ Մարկեդոնովի հետ համաձայնելով կարծում ենք, որ, օրինակ, Գագիկ Ծառուկյանի ձերբակալության եւ նրա շուրջ իրականացված պրոցեսները, որոնք ընթացան Ռուսաստան այցին սինխրոն, վկայում են մի բանի մասին՝ Փաշինյանը ցանկանում է պայմանավորվել Ռուսաստանի հետ: Բայց ցանկանում է նաեւ հասկացնել, որ Մոսկվան միայն իր հետ պետք է գործ ունենա, իսկ ռուսամետ ուժերը միշտ գտնվելու են իր հարվածի տակ: Նա պարզապես փորձում է Հայաստանում ռուսամետ ուժերի, այսպես ասած, լինելիությունը «վաճառել» Ռուսաստանին՝ իր հետ պայմանավորվելու դիմաց, եւ կարգավորել տնտեսական հարաբերությունները, ինքը դա կկարողանա Հայաստանի ներսում օգտագործել համապատասխան «փաթեթավորմամբ»՝ իր էլեկտորատի առաջ շարունակելով ներկայանալ որպես «կինոյի գլխավոր հերոս դուխով տղա, որը կարողացավ նույնիսկ Պուտինի հետ լեզու գտնել»: Զուգահեռաբար նաեւ հասկանում է, որ, անկախ այն բանից, թե պառաված, «նեխած արիստոկրատ» Ֆոն դեր Լայենը կամ հանկարծ ծիրանի ջեմի սիրահար դարձած Մարթա Կոսը չեն կարողանալու լուծել իր խնդիրները: Իհարկե՝ միլիարդներ կխոստանան, բայց կտմն արդյոք՝ խիստ կասկածելի է:

Իսկ Հայաստանում ամբողջ տարին չէ, որ շոգ ամառ է: Դեռ ձմեռ է գալու: Աշխաբադից էլ գազի ներկրումը խիստ մշուշոտ հեռանկար է, հատկապես եթե նկատի ունենանք, որ այդ ներկրումները կարող են, ամենահամեստ հաշվարկներով, 1000 խմ-ի դիմաց 250 դոլար լինել, ու այդ դեպքում ներքին շուկայում Հայաստանի՝ հասարակ սպառողի համար գազի գինը կարող է դառնալ մինչեւ 200 դրամ՝ մեկ խորանարդ մետրի դիմաց: Առայժմ Հայաստանը դեռ ԵԱՏՄ անդամ է: Բայց, որքան հայտնի է, իրավաբաններին Հայաստանի մասով ԵԱՏՄ առաջնորդների տված հանձնարարականը, ինչպես նաեւ՝ Հայաստանին ԵԱՏՄ առաջնորդների քառյակի կողմից փոխանցված՝ անդամակցության հետագայի մասին հանրաքվե անցկացնելու փաստաթուղթը դեռ ուժի մեջ է: Ուժի մեջ է նաեւ ՀԱՊԿ-ից Հայաստանի՝ այս տարեվերջին հնարավոր արտաքսման հարցը: Ուժի մեջ է նաեւ Հայաստանի առնչությամբ ԵԱՏՄ-ում դեկտեմբերին կայացնելիք որոշումների հարցը: Փաշինյանը կարող է, իհարկե, ասուլիսի ժամանակ ուզածն ասել՝ ռուսների հետ պայմանավորվածությունների մասով: Բայց հո հասկանում է, որ Ռուսաստանում մեկ հոգի է «ասողը», ու դա Միխայիլ Միշուստինը չէ, այլ Վլադիմիր Պուտինն է: Միշուստինն այդ առումով ֆունկցիոներ է: Հանդիպումն էլ անշուք էր՝ անհամեմատելի Պուտին-Փաշինյան հանդիպումների հետ՝ նույնիսկ արտաքին «դեկորացիաների» մասով, չհաշված՝ կարգավիճակն ու արարողակարգը: Մոսկվան էլ իր հերթին է ամեն բան շատ լավ հասկանում: Ու նաեւ շատ համբերատար է, գիտի իր արժեքը, կշիռը եւ այլն: Ու եթե թեկուզ շատ բարձր գնով էլ սա որպես վերջաբան հնարավոր լինի պայմանավորվել, հասկանալի է, որ դա մինչ այժմ եղած «բնականոն նորմալ հարաբերությունների պայմանավորվածություն այլեւս չի լինի»:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գյուղեր մեկնելու տրանսպորտ չկա

30 տարի առաջ է կազմավորվել Տավուշի մարզը, սակայն մարզկենտրոն Իջեւանի եւ մարզի համայնքների՝ Դիլիջանի, Նոյեմբերյանի, Բերդի հետ հասարակական տրանսպորտով կապը չի իրականացվում: Նախկինում Իջեւան-Նոյեմբերյան, Իջեւան-Դիլիջան, Իջեւան-Բերդ երթուղիներով եւ հակառակ ուղղություններով հասարակական տրանսպորտ՝ միկրոավտոբուսային երթուղիներ են գործել, սակայն դրանք վաղուց չեն գործում: Ամեն օր կարելի է տեսնել Իջեւանի ավտոկայարանում գտնվող Դիլիջան քաղաքի, Դիլիջան համայնքի Հաղարծին, Թեղուտ, Հովք գյուղերի բնակիչներին, որոնք սպասում են, որ Իջեւանից Երեւան մեկնող «գազել»-ները լցվեն մայրաքաղաք մեկնողներով, որպեսզի դրանից հետո մի կերպ տեղավորվեն, վարորդի տված աթոռի վրա նստեն կամ ոտքի վրա կանգնեն, որ Երեւանի միկրոավտոբոսով իրենց բնակավայրը հասնեն: Ամեն օր մարդիկ Նոյեմբերյան,Դիլիջան, Բերդ համայնքներից զանազան գործերով կամ մարզկենտրոնում աշխատանքի գնալու համար մեկնում են Իջեւան: Նրանցից շատերն անձնական ավտոմեքենա չունեն, տաքսիների վարորդներն էլ մեծ ուղեվարձ են պահանջում: Մնում է հասարակական տրանսպորտը, որը չի գործում: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրինք. «Նախկինում հայտարարել էիք Տավուշի մարզում երթուղային միասնական ցանցի ստեղծման մասին: Ե՞րբ է այն ստեղծվելու եւ ի՞նչ է իր մեջ ներառելու: Ե՞րբ են գործելու Նոյեմբերյան-Իջեւան-Նոյեմբերյան, Բերդ-Իջեւան-Բերդ,Դիլիջան-Իջեւան-Դիլիջան հասարակական տրանսպորտի երթուղիները»: Մարզպետարանից պատասխանել են. «ՀՀ Տավուշի մարզում երթուղային միասնական ցանց դեռեւս չի գործարկվել»: Հույս կա՞, որ այն երբեւէ կգործարկվի: Այս մասին մարզպետարանը լռում է:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԴԱՏԸ ՉԻ ՎԵՐՋԱՑԵԼ, ԲԱՅՑ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵԼ Է

Եղեգիս համայնքի ղեկավար Արթուր Ստեփանյանը, որը մեղադրվում է իրեն վստահված գույքի առանձնապես խոշոր չափերով հափշտակության, ինչպես նաեւ՝ պաշտոնեական կեղծիքի մեջ, վերադարձել է աշխատանքի: Հիշեցնենք, որ 2022-ի ՏԻՄ ընտրություններում Արթուր Ստեփանյանը վերընտրվեց այդ պաշտոնում՝ ՔՊ ցուցակով, իսկ 2 տարի անց ՔՊ-ական համայնքապետը կալանավորվեց: Նրան մեղադրանք էր առաջադրվել (ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով եւ քրօրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասով) այն բանի համար, որ նա, 2017 թ. նոյեմբերի 5-ից զբաղեցնելով Վայոց ձորի մարզի Եղեգիս խոշորացված համայնքի ղեկավարի պաշտոնը, հանդիսանալով պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ, իր իշխանական լիազորություններն օգտագործելով, այլ անձանց օժանդակությամբ, կատարել է իրեն վստահված գույքի առանձնապես խոշոր չափերով հափշտակություն, ինչպես նաեւ՝ պաշտոնեական կեղծիք: Դատարանը մեղադրյալ Արթուր Ստեփանյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը փոխել էր համակցված այլընտրանքային խափանման միջոցներով՝ կիրառել էր վարչական հսկողություն, գրավ՝ 3 մլն ՀՀ դրամ, եւ կասեցրել նրա պաշտոնավարումը: Նաեւ արգելել էր Արթուր Ստեփանյանին՝ հաղորդակցվել վարույթին օժանդակող անձանց՝ վկաների եւ մեղադրյալների հետ:

Արթուր Ստեփանյանին հարցրինք՝ դատարանը Ձեր պաշտոնավարումը կասեցրել էր, այդ ինչպես եղավ, որ հիմա պաշտոնավարում եք, դատարանի կողմից պաշտոնի վերականգնման որոշում կա՞: «Այո, առանց դատարանի վճիռ ոնց կարող է լինել»: Դատավարությունը շարունակվո՞ւմ է, թե՞ Ձեզ արդարացրել են: «Դեռ չի վերջացել, բայց աշխատանքի վերականգնման վճիռ է կայացրել: Մի քանի վկաներ կան, նրանց էլ կլսեն, նոր վերջնական վճիռը դատավորը կկայացնի»: Դատարանի որոշմամբ Ձեզ արգելված էր հաղորդակցվել վարույթին օժանդակող անձանց՝ վկաների եւ մեղադրյալների հետ, ինչպե՞ս եղավ, որ հիմա ազատ շփվում եք: «Դա համայնքապետարանի աշխատակիցների հետ էր կապված, կներեք, հարմար չի խոսել»:

Մենք տեղեկացանք, որ Արթուր Ստեփանյանի վերադարձը համայնքապետարանում լավ չեն ընդունել: Համայնքապետ Ստեփանյանի եւ համայնքապետի տեղակալ Ահարոն Գաբրիելյանի հարաբերությունները լարված են: Ստեփանյանն առաջին իսկ հարմար պահին աշխատանքից կազատի առաջին տեղակալին: Նրա վերադարձից ապշել են նաեւ ավագանու անդամները, քանի որ, ըստ մեր աղբյուրի, չարաշահումների համար առաջադրված մեղադրանքները շատ մեղմ են համարվել: Քանի որ Արթուր Ստեփանյանը համայնքապետ է ընտրվել ՔՊ-ի ցուցակով, ավագանու ՔՊ-ական անդամները 2 մասի են բաժանվել. մի կողմը ցանկանում է համայնքապետին անվստահություն հայտնել եւ ավագանու նիստով կասեցնել պաշտոնավարումը: Համայնքապետի առաջին տեղակալ **Ահարոն Գաբրիելյանին** հարցրինք, թե ինչ հարաբերությունների մեջ է Արթուր Ստեփանյանի հետ: «Նորմալ, աշխատանքային»: Մեզ ասացին, որ ձեր հարաբերություններն այնքան էլ լավ չեն, եւ համայնքապետն ուզում է Ձեզ աշխատանքից ազատել: «Եթե կարող է, թող ազատի, ի՞նչ ասեմ»,- եղավ պատասխանը:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ ժողովրդական արտիստ Հակոբ Ազիզյանի հետ մեր հարցազրույցում («Գործ ունենք ոչ թե սխալի, այլ գիտակցված, կործանարար քաղաքականության հետ», 24 հունիսի, 2026թ.) բարձրացվել էին տարբեր հարցեր՝ մշակույթի եւ կրթության ոլորտում կառավարման արդյունավետության, պետական մտածողության, մեկ անձի ձեռքում բազմաթիվ գործառույթների կենտրոնացման մասին: Հարցազրույցից հետո պատասխաններ ստացանք տարբեր կառույցներից եւ անձանցից: Օրինակ, Հակոբ Ազիզյանը, որ երկար տարիներ աշխատել է թե՛ ինստիտուտի, թե՛ թատրոնի տնօրեն, հարց էր բարձրացրել՝ հնարավո՞ր է արդյոք մեկ մարդը՝ Էլֆիկ Զոհրաբյան, կարողանա միաժամանակ լիարժեք ղեկավարել պետական բուհի մասնաճյուղ, դասավանդել մի քանի կրթական հաստատություններում, աշխատել թատրոնում որպես դերասան, կատարել գրական բաժնի վարիչի գործառույթներ, ղեկավարել ստեղծագործական ստուդիա եւ միաժամանակ ներգրավված լինել այլ ծրագրերում՝ առանց աշխատանքի որակի անկման եւ առանց աշխատաժամանակի համընկնման: Եվ դա տաղանդի հարց չէ, դա պետական կառավարման, աշխատանքի կազմակերպման եւ օրենքի պահպանման հարց է: Հարցազրույցին արձագանքած պարոն Զոհրաբյանը եւ մի շարք կառույցներ պատասխանել են, փաստաթղթեր են մեզ ուղարկել, սակայն, ցավոք, գլխավոր հարցին չեն պատասխանել:

Թվարկել են Զոհրաբյանի գիտական գործունեությունը, հեղինակած պիեսները, միջազգային գիտաժողովները, պետական պարգեւները, մրցանակները, նույնիսկ եզրակացրել, որ «նման ծանրաբեռնվածությունն անհատականությունների դեպքում լիովին հնարավոր է»: Սակայն հանրությանը հետաքրքրում են ոչ թե իրենց կարծիքն ու գնահատականը, այլ՝ փաստերը: Գիտական աստիճանը, պետական մեդալը կամ ստեղծագործական հաջողությունները չեն կարող փոխարինել աշխատաժամանակի հաշվառմանը եւ օրենքի պահանջներին: Մեծ վաստակը հարգանքի արժանի է, բայց այն չի կարող որեւէ մեկին վեր դասել օրենքից: Պատմությունը բազմաթիվ օրինակներ գիտի: Հին Հռոմում հաղթական արշավանքներից վերադարձած կոնսուլը մեկ օր տրիումֆ էր անում, ապա հանում էր իշխանության խորհրդանիշները եւ վերադառնում հասարակության մեջ՝ որպես հանրապետության սովորական քաղաքացի: Պետությունն ուժեղ էր հենց այն պատճառով, որ նույնիսկ ամենամեծ ծառայությունները չէին վերացնում օրենքի գերակայությունը: Այդ սկզբունքը, կարծում ենք, այսօր նույնքան արդիական է:

Պարոն Զոհրաբյանը շրջանցում է էական հանգամանքներ: Նա գրեթե չի անդրադառնում այն փաստին, որ թատրոնում իրականացնում է նաեւ գրական բաժնի պետի գործառույթներ, մինչդեռ հենց թատրոնի տնօրենի պաշտոնական պատասխանից պարզ է դառնում, որ այդ աշխատանքը կատարվում է առանձին վարձատրությամբ: Ավելին, պարոն Զոհրաբյանը գրել է, որ Ստեփանավանում իրականացրել է խորհրդատվական աշխատանք՝ հասարակական հիմունքներով: Սակայն համայնքի պաշտոնական պատասխանում հստակ նշվում է, որ նա երեք ամսով աշխատանքի է ընդունվել եւ այդ աշխատանքի համար ստացել է համապատասխան վարձատրություն: Այս երկու ձեւակերպումների միջեւ առկա տարբերությունը, մեր կարծիքով, պահանջում է լրացուցիչ պարզաբանում: Նրա պատասխանում բազմիցս կրկնվում է նաեւ այն միտքը, թե նախկին տնօրեններն էլ են աշխատել մի քանի ուղղությամբ: Սակայն նույնիսկ եթե նման նախադեպեր եղել են նախկինում, դա դեռ չի նշանակում, որ այսօր այն համապատասխանում է գործող օրենսդրության պահանջներին:

Ամենազարմանալին, թերեւս, պետական կառույցների արձագանքն էր: ԿԳՄՍ նախարարությունը փաստացի չի արձագանքել բարձրացված հարցերին՝ առաջարկելով դիմել այլ մարմնի: Մինչդեռ հենց նախարարությունն է ոլորտի պետական քաղաքականությունն իրականացնող մարմինը, եւ հանրության մոտ բնական հարց կառաջանա՝ եթե ոչ նախարարությունը, ապա ո՞վ պետք է գնահատի, թե պետական բուհի տնօրենի աշխատանքային ծանրաբեռնվածությունը համատեղելի՞ է նրա հիմնական պարտականությունների լիարժեք կատարման հետ: Ահա ԿԳՄՍՆ-ի կարճառոտ պատասխանը. «Թեմայի վերաբերյալ հարցումն առաջարկում ենք հասցեագրել Առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմին»: Մայր բուհի պատասխանը եւս, մեր գնահատմամբ, չի բխում հարցի էությունից: Փոխանակ պարզաբաներ՝ ուսումնասիրե՞լ են արդյոք տնօրենի փաստացի աշխատաժամանակը, գնահատե՞լ են համատեղումների օրինականությունը, թե՝ ոչ, պարզապես ներկայացրել են Աշխատանքային օրենսգրքի հոդվածները: Սակայն մենք օրենքի բովանդակությունը չէինք հարցրել, այլ՝ արդյոք այդ օրենքը պահպանվո՞ւմ է այս կոնկրետ դեպքում: Հետեւաբար, ստեղծվում է տպավորություն, որ գլխավոր հարցից պարզապես խուսափել են: Աշխատանքային օրենսգրքի 99-րդ եւ 139-րդ հոդվածները բավական հստակ կարգավորումներ են նախատեսում համատեղությամբ աշխատանքի եւ աշխատաժամանակի վերաբերյալ: Ընդ որում՝ 139-րդ հոդվածը պատասխանատվությունը չի դնում միայն գործատուի վրա: Եթե անձը միաժամանակ աշխատում է տարբեր գործատուների մոտ, ապա հենց ինքը՝ աշխատողը, նույնպես պարտավոր է ապահովել, որ իր աշխատաժամանակը չգերազանցի օրենքով սահմանված առավելագույն չափը:

Ստացված պատասխանների, պաշտոնական փաստաթղթերի եւ դրանցում առկա անհամապատասխանությունների համադրումից տպավորություն ստացանք, որ կան հարցեր, որոնք արժանի են իրավական մանրակրկիտ ուսումնասիրության: Հենց դրա համար էլ գոյություն ունեն վերահսկող եւ իրավապահ մարմինները: Հատկանշական է նաեւ մեկ հանգամանք: Փաստացի ոչ մի պատասխան չի ներկայացնում աշխատաժամանակի իրական հաշվառման մեխանիզմը: Եթե բուհում աշխատանքային օրը համընկնում է թատրոնի փորձերի, դասավանդման կամ այլ պարտականությունների հետ, ապա ինչպե՞ս է բացառվում այդ համընկնումը, ինչպե՞ս է իրականացվում աշխատաժամանակի հաշվառումը, եւ ո՞վ է վերահսկում այդ ողջ գործընթացը: Այս հարցերի պատասխանը չստացանք: Չստացած հարցերի «փաթեթը» պատրաստվում ենք ներկայացնել նաեւ ՀՀ գլխավոր դատախազություն եւ իրավասու մյուս մարմիններին՝ ակնկալելով ոչ թե ընդհանուր բնույթի բացատրություններ, այլ իրավական գնահատական հարցին, թե պահպանվե՞լ են Աշխատանքային օրենսգրքի պահանջները, պատշաճ հաշվառվե՞լ է աշխատաժամանակը, իրականացվե՞լ է օրենքով նախատեսված վերահսկողություն:

Որովհետեւ սա մեկ անձի խնդիրը չէ: Այն վերաբերում է պետական կառավարման որակին, հանրային վստահությանը, օրենքի հավասար կիրառմանը բոլորի նկատմամբ՝ անկախ պաշտոնից, կոչումից, գիտական աստիճանից կամ պետական պարգեւներից:

ՄԵԿՆԱԲԱՆ

ՄԵԿ ԱՆՁԸ ՔԱՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ ԵՎ ՊԱՇՏՈՆ ԿԱՐՈՂ Է ԶԲԱՂԵՑՆԵԼ

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՇԻԼԱՇՓՈԹ Է ՍՊԱՍՎՈՒՄ

Սեպտեմբերի 1-ից բոլոր հանրակրթական հաստատությունները, մասնավորապես՝ դպրոցները, որոնք աշխատում էին մարզային ենթակայությամբ, սկսելու են աշխատել ԿԳՄՍ նախարարության ենթակայության տակ: «Հրապարակը» փորձեց որոշ պարզաբանումներ ստանալ այս գործընթացին առնչվող անձանցից: Մենք խոսեցինք Տավուշի սահմանամերձ Ոսկեպարի միջնակարգ դպրոցի տնօրեն **Հարություն Ալավերդյանի** հետ: Ալավերդյանի կարծիքով՝ ճիշտ կլինի, եթե կա՛մ այն լինի, կա՛մ՝ այն: «Ուսումնական մասով զբաղվում է նախարարությունը, իսկ ֆինանսականը մնում է մարզպետարանին: Միշտ էլ նախարարությունը ցուցումներ տվել է: Եթե կարիք է լինում, զանգահարում ենք կրթության վարչություն, շատ սիրով լսում են: Եթե անհրաժեշտ է լինում, նույնը՝ մարզպետարանը»,- ասաց նա: Հարցին, թե արդյոք կրթության նախարարությունն ավելի՞ արագ կլուծի ընթացիկ հարցերը, քան մարզպետարանը, Ալավերդյանը պատասխանեց. «Դանդաղի կամ արագի հարց այստեղ չկա: Ֆինանսական խնդիր չէ, որ ուշացնեն: Միշտ էլ իրավունք ունենք դիմելու թե՛ նախարարությանը, թե՛ մարզպետարանին: Հիմա եթե մարզպետարանը չլինի, ստիպված պետք է դիմենք այնտեղ: Այդքան էլ լուրջ հարց չէ»: Իսկ դիտարկմանը, թե շտապ խնդիրների դեպքում Երեւան հասնելը կարող է դժվարություններ առաջացնել, պատասխանեց. «Կրթական հարցերով կարող ենք դիմել նաեւ օնլայն տարբերակով»: Ալավերդյանի խոսքով, ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են մարզպետարան, եւ այս փոփոխությունը, ըստ նրա, այդքան էլ լուրջ խնդիրներ չի առաջացնելու:

Կապ հաստատեցինք կրթության փորձագետ **Ատոմ Մխիթարյանի** հետ: «Դպրոցներն արդեն հարմարվել էին այն իրավիճակի հետ, որ գործ էին ունենում մարզպետի, մարզպետի աշխատակազմի հետ եւ կարծես լեզու էին գտել: Նոր իրավիճակ է ստեղծվել, եւ այս նոր իրավիճակը դժգոհություններ է առաջացրել, այնպես չէ, որ նախարարության մոտ էլ ամեն ինչ հստակ է եւ հեշտ հասկանալի: Պետք է կարողանան կառավարել մեկ կետից, ո՛չ այդքան մարդ ունեն, ո՛չ այդքան մասնագետ ունեն, ո՛չ այդքան նախարարության աշխատակից ունեն, ինչպե՞ս են անելու՝ անհասկանալի է: Եվ հատկապես այն դպրոցները, որ աչքից հեռու են, նրանց մոտ հաստատ կրթության որակը գնալով անկում է ապրելու: Չեն հասցնի մյուս տարվանից 1400 դպրոցով զբաղվելու, որովհետեւ մյուս տարվանից Երեւանի դպրոցները նույնպես անցնելու են նախարարության հսկողության ներքո: Առանց պատրաստելու, էլի հերթական փոփոխությունն են անում»:

«Նախարարությունը պետք է ընդհանուր մոտեցում ցույց տա բոլոր դպրոցներին: Յուրահատկությունը կկորցնի՝ ոնց որ բոլորին նույնկերպ նայեն»,- ասում է Մխիթարյանը: Այս ամենը բերելու է նրան, որ շատ դպրոցներ մնալու են ուշադրությունից դուրս: Մարզից Երեւան հասնելու դժվարությունների մասով էլ Ատոմ Մխիթարյանը նշում է. «Ամենակարեւոր մասն է՝ իրենք ասում են, որ գալ-գնալու կարիք չի լինելու, բայց մենք Երեւանում ենք ապրում: Ամեն փոքր հարցով փորձելու են նախարարությունում այդ հարցի լուծումը գտնել, իսկ նախարարությունն ունիվերսալ չի, չի կարող բոլոր հարցերին պատասխանել... Հարցերի կուտակում է լինելու, դժգոհությունների առիթ,

վատ հետեւանքներ կրթության համար»: Մարզպետարաններին թողել են դպրոցների վարչատնտեսական հարցերով զբաղվելը, եւ դա լրացուցիչ կոնֆլիկտ է առաջացնելու:

«Մեկ բառով ասեմ՝ շիլաշփոթ է ստեղծվելու, չեն հասկանալու՝ ով ինչի համար է պատասխանատու, եւ, ի վերջո, կա՛մ ամեն մեկն անելու է այն, ինչ իր ցանկությունն է, կա՛մ ոչ ոք ոչինչ չի անելու, եւ բարձիթողի վիճակ է ստեղծվելու ամբողջ կրթության համակարգում»,- ընդգծում է Մխիթարյանը:

Շուշան ՍԱՐԻԿՅԱՆ

ԹԱՐՍ ԳԼԱՎԼԻՏ

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

Գլավլիտ - Главное управление по делам литературы и издательств (Գրականության եւ հրատարակչության գլխավոր վարչություն): Մեր սերունդը լավ է հիշում այս օղակը, որ կանգնած էր խմբագրությունների, հրատարակչությունների եւ տպարանների արանքում: Մինչեւ տպարան գնալը բոլոր գրքերն ու թերթերը նախ կարդում էին գլավլիտի աշխատողները, մի հատ շտամպ էին դնում «օտիսկի» վրա, եւ նոր միայն միանում էր տպագրական մեքենան: Մենք գլավլիտը համարում էինք փաստացի գրաքննություն, բայց այնպես էլ չէր, որ այդ օղակը մեզ չէր փրկում դատվելուց: Լրագրողներս, օրինակ, կարող էինք մեզնից անկախ պետական գաղտնիք հրապարակել, Բրեժնեւի կոչումները կիսատ գրել, որեւէ զորամասի անունն ու տեղակայման վայրը բացահայտ ներկայացնել, տարեթվերի սխալ թույլ տալ... Եվ այդ «դժվար պահին» մեզ օգնության էր հասնում գլավլիտի ամենատես աչքն ու մեր խմբագիրներին ազատում ավելորդ քաշքշուկներից:

Երեկ լսեցի, որ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ լրատվամիջոցներում տեղ գտած նյութերի վերաբերյալ համապարփակ ուսումնասիրություն կատարելու նպատակով աշխատանքային խումբ է ստեղծվել: Այդ խումբը, հասկանում ես, կարդալու է բոլոր զանգվածային լրատվամիջոցների նյութերն ու որոշի՝ չկա՞մ, արդյոք, դրանց մեջ որեւէ կրիմինալ, որ ԱԱԾ-ին ուղարկեն խմբագրություններ՝ խմբագիրներին եւ նյութերի հեղինակներին գետնին պառկեցնելու: Կարելի է ասել, որ Հայաստանի նոր անկախության արշալույսին վերացած գլավլիտը կրկին սկսում է գործել, բայց ոչ թե խմբագրությունների եւ տպարանի արանքում, այլ այն ժամանակ, երբ արդեն բանը բանից անցած է լինում՝ թերթը տպագրված, նյութը հրապարակված, լմնցած... ԱԱԾ-ն թերթը թափահարելով մտնելու է խմբագրություն՝ էս ի՜նչ եք գրել, էս ի՜նչ խոսույթ եք դրել շրջանառության մեջ, դուք ամոթ-աբուռ չունե՞ք, բա վարչապետ մարդու մասին այսպիսի բաներ կհրապարակե՞ն... Ո՞վ է այս նյութի աղբյուրը, բացահայտեք, թե չէ՝ ձեզ ենք տանում քաղմաս... Ու մինչեւ էս ենիչերներին բացատրես, որ իրավունք ունես նյութի աղբյուրը չբացահայտել, մինչեւ հասկացնես, որ նյութն իրականում այլ բանի մասին է, խմբագրին ու հեղինակին կպառկեցնեն գետնին, ձեռնաշղթաներ կանցկացնեն եւ «օֆիցերի» ուղեկցությամբ քարշ կտան բաժին:

Մի խոսքով՝ Նիկոլը թարս գլավլիտ է բացում, որը կարելի է բնութագրել որպես գրաքննություն՝ գրատպությունից հետո: Աշխատանքային խումբը, որ ուսումնասիրելու է զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները, բավականին պատկառելի տեսք ունի: Բացի մեկ-երկուսից, մնացածը վարչապետի աշխատակազմից են՝ լրագրային աշխարհին անծանոթ երեւույթներ: Սրանց շեֆն Արայիկ Հարությունյանն է լինելու, կարծես, քանզի աշխատանքային խմբի ղեկավարը հենց նրա տեղակալն է՝ Արմենակ Խաչատրյանը:

Ասել, որ մամուլի եւ զանգվածային լրատվամիջոցների համար դժվարին ժամանակներ են սկսվում, նշանակում է ոչինչ չասել: Մեզ համար դժվարին ժամանակները սկսվել են 2018 թվականի մայիսից, երբ Փաշինյանն իր թափառախմբով եկավ իշխանության՝ իր քաջագործությունների շարքում ունենալով ռադիոտան դուռը կոտրելով ներս մտնելու տխուր փաստը: Գրեցինք, թքեցինք, մրեցինք, բայց նրան ոչ ոք չպատժեց դրա համար: Խնդրեմ, այդ օրվանից 8,5 տարի անց նա ստեղծում է աշխատանքային խումբը, որը կարող է ուզածդ խմբագրության դուռը ջարդել եւ որեւէ պատրվակով ներխուժել:

Կարող եք ասել, որ գույները խտացնում եմ, այդպիսի բան լինել չի կարող, Նիկոլն ինքը լրագրող ու խմբագիր է եղել, ֆլան, ֆստան... Հայտնի խոսք կա՝ մի վախեցիր տանկից, այլ վախեցիր խմած տրակտորիստից: Մենք իրականում ոչ թե պետական մեքենայի հետ գործ ունենք, այլ մի խմած տրակտորիստի, որի թանին եթե ասես՝ թթու է, կարող է այդ մեքենան քշել քեզ վրա: Հուսալ, որ տուգանք վճարելով կազատվես, մեղմ ասած, միամտություն կլինի: Կփակեն խմբագրությունը, գույքը կջարդեն, դատի կտան, կալանքի կտանեն... Կենդանիներ ունե՞ք... Կենդանիներին էլ կտանեն... Ֆոտոթղթակիցներին, օպերատորներին, մոնտաժնիկներին, հավաքարարին, բոլորին: Որ ասեն՝ պետական գաղտնիք եք հրապարակել՝ ի՞նչ եք պատասխանելու: Դա էլ հո վիրավորանքի կամ զրպարտության հարց չէ՞, որ կարողանաք պլստալ:

Ի՞նչ անել: Ես առաջարկում եմ միառժամանակ փակել բոլոր խմբագրությունների դռներն ու գնալ տուն, քանի դեռ իրենք չեն փակել: Կմնա մի «Հայկական ժամանակ»՝ թող մնա: Իբր ով է կարդում Նիկոլի ընտանեկան այդ թերթը, որ մի հատ էլ մտածենք՝ հանկարծ մի վատ բան չպատահի: Նախ՝ ամառվա սեզոն է, մի քիչ կհանգստանանք, եւ ապա՝ չի բացառվում, որ առաջիկա ամիսներին նորաստեղծ աշխատանքային խումբը, Նիկոլի հետ միասին, դադարեցնի իր գործունեությունը: Դրանից հետո մինչեւ նոր վարչապետ, նոր բան, մենք կրկին կհասցնենք հունի մեջ ընկնել ու մեր հիմնական գործով զբաղվել, այն է՝ հանրությանը բացատրել, թե ինչպիսին չի կարող լինել ՀՀ վարչապետը:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 10.07.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՕՐԵՆՔ ՉԻ ՄՆԱՑԵԼ, ՈՐ ՉԽԱԽՏՎԻ

Վախթանգ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

Մեկ-երկու օր առաջ Նիկոլենք ստիպված են եղել ԱԺ-ում քննարկել բջջային հեռախոսների IMEI ռեեստրին առնչվող կարգավորումների հարցը: Ստիպված, քանի որ իրենք այդ հարցը որոշել էին կարգավորել ոչ թե եվրոպական մոդելով՝ դեպի ուր իբր թե ձգտում են, այլ՝ ավտորիտար երկրների մոտեցմամբ: Եվ այդ թվում՝ իրենց իշխանության համար անվտանգային սպառնալիք համարվող Ռուսաստանի: Բայց սոցցանցերում բախվել են փորձագետների քննադատական գրառումներին: Իսկ այս օրերին, երբ Գագիկ Ծառուկյանի ու նրա բիզնեսի առումով բռնաճնշումների արդյունքում մի քանի տասնյակ հազար քաղաքացիների կտրել են աշխատանքից, հերթական բողոքի ալիքը հեչ տեղին չէր լինի: Թեկուզ այն ծավալվում էր ոչ թե փողոցում, այլ իրենց սիրելի սոցցանցերում:

Մի երկու խոսք, թե ինչ է իրենից ներկայացնում IMEI ռեեստրը: Դա բջջային հեռախոսների եւ սարքերի 15-նիշանոց թվաշարք է: Այդ թվաշարքով ստեղծվում է սարքերի միջազգային նույնականացուցիչների կոդերի միասնական պետական շտեմարան: Ինչպես ընտրողների ռեգիստրն է, բայց այն միայն ազգային մակարդակով է: IMEI ռեեստրի նպատակը հիմնականում գողացված կամ էլ մաքսանենգությամբ որեւէ երկիր ներմուծված հեռախոսների եւ այլ սարքերի նույնականացումն է: Դրանով խոչընդոտվում է շուկայական այդ ոլորտի ստվերայնության մեծացումը: Բայց քանի որ Հայաստանը 2018-ից այս կողմ շատ արագ վերածվեց ավտորիտարի՝ բռնելով բռնապետության ճանապարհը, գործող իշխանությունը ցանկանում է այդ թվաշարքի ռեգիստրը վերածել տոտալ վերահսկողության գործիքի, ինչի համար անհրաժեշտ է շարժական կապի օպերատորներին պարտադրել, որպեսզի յուրաքանչյուր հեռախոս՝ իր այդ թվաշարքով նույնականացվի դրա տիրոջ հեռախոսահամարի հետ: Մնացածն արդեն, ինչպես ասում են, տեխնիկայի կամ, տվյալ դեպքում՝ ծրագրային խնդիր է: Կա նաեւ մեկ այլ, շատ լուրջ խնդիր՝ հեռախոսի տիրոջ անձնական տվյալների գաղտնիության պահը: Մարդիկ չեն հավատում, որ Նիկոլենց իշխանությունը կարող է դա ապահովել: Հաշվի առնելով, ասենք, հրեական ծագման հզոր հաքերական գործոնը եւ Ադրբեջանի հետ Իսրայելի կապերը:

Ազգային ժողովում քննարկումը վարող ՔՊ-ական քվազիէլիտայի ներկայացուցիչ Թունյան Բաբկենի խոստման համաձայն, այդ «համակարգով քաղաքացիների անձնական տվյալներին եւ հեռախոսներին ոչ ոք հասանելիություն չի ունենալու, մարդկանց չեն գաղտնալսելու, չեն տեղորոշելու, չեն հետեւելու», որովհետեւ, իսկ այժմ բռնվե՛ք, հարգելի ընթերցողներ, «դրա մասին խոսելն անգամ անիմաստ է, որովհետեւ դա պարզապես անօրինական է»: Հասկանում եք, ՔՊ-ականը խոսում է անօրինականության անթույլատրելիության մասին: Կարծես մեկ ամիս առաջ չէր, որ ծառուկյանական «Բարգավաճ Հայաստան» կուսակցության մուտքն Ազգային ժողով խոչընդոտելու համար գործող իշխանությունը երեք անգամ խախտեց օրենքը: Նախ, ԿԸՀ-ի միջոցով չեղարկելով երեք ընտրատեղամասերի քվեարկության արդյունքները, չկազմակերպեց վերաքվեարկություն, ինչպես պահանջվում է Ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի կողմից: Երկրորդ անգամ նույն ԿԸՀ-ն խախտեց օրենքը՝ չկատարելով վարչական դատարանի որոշումը, որում վերաքվեարկումը որպես անհրաժեշտություն էր դիտարկվել: Եվ, երրորդ, ՍԴ-ն, ունենալով վարչական դատարանի որոշումը, չպարտադրեց ԿԸՀ-ին դրա իրականացումը:

Կարծում եմ, որ այս թարմ օրինակը, այն էլ՝ այդ մակարդակի ապօրինությամբ, բավարար է, որպեսզի յուրաքանչյուր գրագետ անձ քահ-քահ ծիծաղեր թունյանական բնորոշման առումով: Երբ ինչ-որ նախաձեռնություն «սղացնելու» համար ասվում է, որ եթե դա օրինական չլիներ, իրենք երբեք չէին անի: Այնպիսի իշխանության ներկայացուցչի կողմից, որի օրոք երեւի օրենք չի մնացել, որ չխախտվի:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am